ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2012-2017 ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ

ԵՐԵՎԱՆ 2012

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2012-2017 ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ

ԵՐԵՎԱՆ 2012 Թ.

Հայաստանի պետական ագրարային համալսարանի 2012-2017 թթ. զարգացման ռազմավարական պլանը մշակվել է ռազմավարական պլանի ստեղծման հանձնաժողովի կողմից:

Ռազմավարական պլանը հավանության է արժանացել 2012 թ.-ի օգոստոսի 30-ի համալսարանի ռեկտորատի նիստում և հաստատվել է 2012 թ.-ի օգոստոսի 31-ի գիտական խորհրդի նիստում (արձ. № 1):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Ներածություն ……	3
Համալսարանի զարգացման ռազմավարական պլանավորումը ……	5
Ագրարային կրթության ներկա մարտահրավերները ……	9
Համալսարանի առաքելությունը ……	16
Համալսարանի տեսլականը ……	17
Կրթության զարգացման ագրարային համատեքստը ……	18
Կրթական գործունեություն ……..	20
Կրթության ոլորտ ……...	22
Ընդունելության համակարգ ……	24
Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգ …….	26
Մասնագիտական կրթության որակի ապահովում ……	28
Մասնագիտությունների կրթական ծրագրեր ……	31
ՈՒսանողակենտրոն ուսուցում ……..	33
Դաստիարակչական գործունեություն ……	35
Կադրային ներուժի զարգացում ……..	37
Լրացուցիչ և շարունակական կրթություն ……	41
Կրթական և գիտահետազոտական գործընթացների ինտեգրում ……..	44
Հետազոտություն և զարգացում ……..	45
Խորհրդատվական գործունեություն ……..	50
Կառավարման համակարգ ……	54
Նյութատեխնիկական բազայի զարգացում ……	57
Ֆինանսական գործունեություն ……..	59
Սոցիալական ոլորտ ……	62
Տեղեկատվական համակարգեր ……	65
Արտաքին կապեր և միջազգայնացում, շարժունակության խթանում ……..	68

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի պետական ագրարային համալսարանի ռազմավարական պլանը սահմանում է համալսարանի առաքելությունը, տեսլականը, առաջնությունները, գլխավոր նպատակներն ու դրանց իրականացման հիմնական ուղիները, որոնք առաջնորդելու են համալսարանին 2012-2017 թվականը:

Ռազմավարական պլանը բացահայտում է համալսարանի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություն է ընձեռում ապագան կանխատեսելու, պլանավորված կերպով սահմանված խնդիրները լուծելու ու առկա խոչընդոտները հաղթահարելու և սահմանված նպատակների իրագործումով՝ համալսարանը դարձնել ավելի հզոր ու գործունակ:

Համալսարանի զարգացման ռազմավարական պլանը մշակվել է հետևյալ փաստաթղթերի հիմնադրություններին համապատասխան.

1. «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների Պետական ծրագիրը»,
2. «Կրթության 2015» Հայաստանի կրթական վարկանիշի վերականգնման տեսլականը,
3. «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը»
4. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը (2004թ.-ի),
5. ՀՀ կառավարություն 2005թ.-ի դեկտեմբերի 22-ի «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» № 2307 որոշումը,
6. ՀՀ կառավարության 2006 թ.-ի «Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործման ժամանակացույցը»,
7. «Հայաստանի պետական ագրարային համալսարանի կանոնադրությունը»,
8. ՀՀ կառավարության 2012թ.-ի մարտի 15-ի որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթական համակարգի՝ եվրոպական բարձրագույն կրթական տարածքներին ինտեգրման գործընթացի ընդլայնման» ծրագիրը,

9. ,,Որակի ապահովման բուհական համակարգեր'' ուղեցույցը,
10. ‹‹Մասնագիտական ուսումնական հաստատության ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության ձևաչափը››:
11. ‹‹Հայաստանի պետական ագրարային համալսարանի 2010-2015թթ. և մինչև 2025 թվականը հեռանկարային զարգացման ռազմավարական հայեցակարգը››:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Համալսարանի զարգացման ռազմավարությունը համալսարանի զարգացման հիմնական ուղղությունները ցույց տվող համալսարանի գործունեության հիմնական ծրագիրն է և մրցակցային միջավայրում ուժերի ու միջոցների կենտրոնացում պահանջող, հաստատության պլանավորված գործողությունների ամբողջությունն է:

Համալսարանի զարգացման ռազմավարական պլանավորումը համալսարանի արդյունավետ կառավարման գործիք է, որն ապահովում է ծրագրային և ենթակառուցվածքային մակարդակներում բոլոր նախաձեռնությունների հաջողությունը: Այն նաև ապագան կանխատեսելու, սահմանված խնդիրները լուծելու և առկա խոչընդոտները հաղթահարելու պլանավորված մոտեցում է:

Ռազմավարական պլանավորման նպատակն է սահմանել համալսարանի առաքելությունը, տեսլականը, առաջնայնությունները, գլխավոր նպատակներն ու խնդիրները և դրանց իրականացման ռազմավարական մոտեցումները: Պլանավորման միջոցով համալսարանը համակենտրոնացնելով առկա մարդկային ու նյութական ռեսուրսները, բացահայտելով իր ուժեղ և թույլ կողմերը՝ իրականացնում է ամրագրված նպատակները և դառնում ավելի հզոր, գործունակ ու կազմակերպված:

Ռազմավարական պլանավորման հրատապությունն առաջ են բերում բարձրագույն կրթության հարափոփոխ կարիքները, տեղեկատվական տեխնոլոգիաների և հաղորդակցման միջոցների անընդհատ զարգացումը, մարդկային, ֆինանսական ու նյութական ռեսուրսների փոփոխականությունը և կրթության միջավայրի այլ ոլորտների արագընթաց փոփոխությունները: Ռազմավարական պլանավորման միջոցով համալսարանը կազմակերպում ու կյանքի է կոչում համալսարանի կազմակերպչական կառավարման, կրթական քաղաքականության, դաստիարակչական, գիտական ու ինավացիոն գործունեության, ինֆորմատիզացիայի, միջազգայնացման ու արտաքին կապերի, ֆինանսական գործունեություն ու նյութատեխնիկական բազայի կատարելագործման, կադրային քաղաքականության և տեղեկատվական-վերլուծական ոլորտների ռազմավարական ծրագրերը:

Պլանավորումը ծրագրային և ինստիտուցիոնալ մակարդակներում համալսարանի ցանկացած նախաձեռնության հաջողությունը ապահովող կարևորագույն գործընթացներից մեկն է, առանց որի այդ նախաձեռնությունները դառնում են ավելի խոցելի ու վտանգված:

Ռազմավարական պլանի իրագործման ժամանակ համալսարանը բոլոր ուղղություններով պարբերաբար պետք է գնահատի իրականացվող գործընթացների արդյունավետությունը և գնահատման արդյունքների հիման վրա կարողանա բարելավել իրականացրած գործունեությունը:

Կարևոր նշանակություն ունի համալսարանի ռազմավարական պլանավորման արդյունավետ մոդելի ընտրությունը, որը կապահովի վարչական կառույցների և բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների փոխգործողություն-ների ներդաշնակությունը, քանի որ ռազմավարական պլանի իրականացման հաջողությունը պայմանավորված է այդ մոդելի արդյունավետ աշխատանքով:

Համալսարանի ռազմավարական պլանավորման սխեման բերված է նկ.1-ում:

Համալսարանի զարգացման ռազմավարական պլանավորման և առանձին ստորաբաժանումների փոխգործողությունների կազմակերպական կառուցվածքի սխեման բերված է նկ. 2-ում:



Նկ. 1 ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ , ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՍԽԵՄԱ

Դեղատոմսի վերանայում
Դեղատոմսերի խմբագրում
Տեղեկատվության ստացում
Տեղեկատվության ստացում
Դեղատոմսերի գրանցում
Դեղատոմսերի գրանցման գրանցում
Դեղատոմսերի գրանցման գրանցում
Դեղատոմսերի գրանցման

ԱԳՐԱՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Համաշխարհային քաղաքակրթությունը հասարակության համար միշտ էլ որոշակի մարտահրավերներ է առաջադրում, որոնցից ամենագլխավորը թերևս մարդկանց պարենամթերքով բավարարելու խնդիրն է: Դրա հիմնական պատճառը ազգաբնակչության թվաքանակի կայուն աճն է, երկրագնդի վրա հաճախակի դարձած բնական և էկոլոգիական աղետները՝ երաշտները, ջրհեղեղները, հրդեհները և այլ երևույթներ, որոնք պարենային ապահովվածության հարցը դարձնում են գերակա խնդիր:

Համաշխարհային ընդհանրական խնդիրների շարքում Հայաստանի համար ավելանում են նաև հանրապետության գյուղատնտեսական օգտագործելի հողերի, մասնավորապես ոռոգելի հողերի սակավությունը, դրանց ոչ արդյունավետ օգտագործումը կամ ջրային պաշարների անարդյունավետ օգտագործումը, գյուղատնտեսական հողերի մասնատվածությունը, սպառման շուկայի մարկետոլոգիական և գյուղատնտեսության վարման ժամանակակից մենեջմենթի բացակայությունը և այլն:

Չնայած վերջին տարիներին լուրջ ծրագրեր են մշակվել գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ, սակայն հաճախ դրանք համակարգված բնույթ չեն կրում: Անհրաժեշտ է, որ այդ ծրագրերը համահունչ լինեն գյուղատնտեսության զարգացման միտումներին և հաշվի առնեն ագրարային գիտության նորագույն նվաճումներն ու բարձր տեխնոլոգիաները:

Այսօր աշխարհի առաջավոր երկրներում գյուղատնտեսության զարգացումն իրականացվում է ագրարային տեխնոլոգիաների և երկրագործության վարման արդյունավետ ու ինտենսիվ համակարգերի ներդրմամբ գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացումը զուգակցվում է շրջակա միջավայրի և կենսառեսուրսների անվտանգության պահպանման, օրգանական ծագման մթերքների և առողջ սննդի ծավալների ավելացմանը նպաստող միջոցառումների կիրառմամբ:

Նպատակաուղղված և արդյունավետ ագրարային քաղաքականության իրականացումը, ագրոպարենային համակարգի զարգացումը, երկրի պարենային

անվտանգությունը և բնակչությանն անվտանգ սննդամթերքով ապահովումը այսօր Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման ռազմավարության առանցքային գերխնդիրն է: Այս ամենը առանց համապատասխան գիտելիքներով և փորձով օժտված մանագետների ու գիտական հետազոտությունների անիրական է:

Չնայած հանրապետության ազգարային համակարգում արդեն ձևավորվել է կրթական և գիտահետազոտական հաստատությունների լայն ցանց, որի խնդիրն է գյուղատնտեսական արտադրությունն ապահովել բարձրորակ, աշխատաշուկայի ժամանակակից պահանջները բավարարող մասնագետներով, սակայն անհարաժեշտ է Հայաստանում վերջնականապես հասնել գիտահետազոտական համալսարանական համակարգի ժամանակակից մոդելի ձևավորմանը, որն իր մեջ սերտորեն կշաղկապի ժամանակակից կրթությունն ու կիրառական գիտությունը:

Վերջին տասնամյակում նախադրյալներ են ստեղծվել կրթության բնագավառում ծրագրային և ենթակառուցվածքային բարեփոխումների համար: Առաջին հերթին այն վերաբերում է ընդհանուր և մասնագիտական կրթության կառուցվածքի և բովանդակության արդիականացմանը, կրթության որակի կատարելագործմանը և կրթական համակարգի կառավարման արդյունավետության բարձրացմանը: Սակայն երկրի կրթական համակարգում դեռևս առկա են մի շարք բացասական միտումներ:

Հանրակրթության համակարգում դպրոցականների գիտելիքների մակարդակը զարգացած երկրների՝ իրենց հասակակիցների համեմատ դեռևս ցածր է, քաղաքային ու գյուղական դպրոցների ուսումնական գործընթացների մեջ առկա է մեծ խզվածք, հասարակության սոցիալական շերտավորումը հանգեցնում է երեխաների գիտելիքների մակարդակների և բարձրագույն մասնագիտական կրթության նախապատրաստվածության անհամապատասխանությանը, որը խորանալու միտում ունի:

Կրթության համակարգում իրականացվող բարեփոխումները հնարավորություն են տալիս լուծելու կրթության համակարգում առկա շատ խնդիրներ և նախադրյալներ են ստեղծում հետագա զարգացման համար:

Այնուհանդերձ կրթության համակարգը դեռևս հեռու է իր առաքելության լիարժեք իրականացումից, առաջ են եկել նոր խնդիրներ ու մարտահրավերներ, որոնց հաղթահարմամբ է պայմանավորված կրթության ապագան:

Կրթության ոլորտում ընթացող բարեփոխումներն ընդլայնվելով ընդգրկել են կրթության բոլոր մակարդակները և բավարար հենք են ստեղծել առաջանցիկ զարգացման համար, առանց որի կրթությունն ի վիճակի չի լինի արձագանքել իր առջև ծառացած մարտահրավերներին:

Բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումներն արդեն իսկ ընդգրկել են կրթության ներքին արդյունավետության բարելավման և միջազգային կրթական տարածքին ինտեգրման խնդիրները: Ներկայումս բարձրագույն կրթության բարեփոխումներն ուղղորդվում են դեպի կրթության բովանդակային փոփոխությունների փուլ:

Այս ամենով հանդերձ՝ հասարակությունում դեռևս զգալի դժգոհություն կա կրթության որակի նկատմամբ: Բուհերը դժգոհություն են հայտնում դպրոցի շրջանավարտների ցածր գիտելիքներից, գործատուները դժգոհում են միջին մասնագիտական և բուհական հաստատությունների շրջանավարտների գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ցածր մակարդակից, հասարակությունում աճում է անվստահությունն ուսումնական հաստատությունների մատուցած կրթական ծառայությունների որակի նկատմամբ:

Մասնագիտական կրթության համակարգը դեռևս լիարժեք կերպով չի համապատասխանում աշխատաշուկայի պահանջարկի ներկա կառուցվածքին, իսկ շարունակական մասնագիտական կրթության համակարգը բավարար զարգացած չէ, ինչը խոչընդոտում է տնտեսության տեխնիկա-տեխնոլոգիական նորացմանը և թույլ չի տալիս արդյունավետորեն արդիականացնել սոցիալական ոլորտը:

Ոլորտում առկա խնդիրներից է նաև վերապատրաստման և որակավորման բարձրացման համակարգի անկատարությունը, որն էլ արգելակում է կրթական գործընթացների ժամանակակից բովանդակությունն ապահովող համապատասխան կրթական տեխնոլոգիաների օգտագործման հնարավորություններին և կադրային ներուժի զարգացմանը:

Բարձրագույն կրթությունը դեռևս թույլ է ինտերգրված գիտական գործունեությանը, գիտահետազոտական աշխատանքները շատ հաճախ ունեն ոչ կիրառական նշանակություն կամ չեն համապատասխանում ժամանակակից հետազոտական մեթոդներին ու տեխնոլոգիաներին, իսկ արդյունքներն արտադրության մեջ ներդրվում են ոչ լիարժեքորեն, կամ ուղղակի ձեռնարկությունների կողմից բացակայում է հետաքրքրությունը գիտական նորարարությունների հանդեպ, ինչը բացասաբար է ազդում նաև մասնագետների պատրաստման որակի վրա՝ միաժամանակ փոքրացնելով գիտական հետազոտությունների զարգացման ներուժը, որն էլ իր հերթին հետագայում կարող է հանգեցնել գիտության ոլորտի կադրային պոտենցիալի զգալի կրճատմանը: Թույլ է գիտության ինտեգրումը համաշխարհային գիտական տարածքին, թույլ է կապը տեղական և միջազգային գիտական հասարակության միջև: Շատ ցածր է ֆինանսական ներդրումը գիտագործնական համակարգում: Բացակայում է գիտական և ուսումնական պատվերի մշակույթը, որը կարող էր ուղեկցվել գիտության և կրթության մեջ մասնավոր ներդրումներով:

Ներկայիս կրթական համակարգը ունի ցածր ներդրումային գրավչություն, շրջանավարտների մեծ մասը դեռևս չի կարողանում աշխատանք ձեռք բերել ըստ իրենց ստացած մասնագիտության, կրթությունը դադարել է խաղալ «սոցիալական վերելակի» դեր, իջել է երիտասարդության կրթական և սոցիալական շարժունակությունը, սահմանափակ է ցածր եկամուտ ունեցող ընտանիքների երեխաների որակյալ կրթություն ստանալու հնարավորությունը: Այս ամենը իր հերթին իջեցնում է կրթական ծառայությունների միջազգային շուկայում Հայաստանի կրթական համակարգի մրցունակության անկմանը:

Կրթական համակարգում ներդրումները չնչին են, և այդ ռեսուրսները օգտագործվում են ցածր արդյունավետությամբ: Գոյություն ունեցող կրթական համակարգը բնութագրվում է հնացող նյութատեխնիկական ու տեղեկատվական բազայով և կրթական հաստատությունների ցանցի ոչ ռացիոնալ կառավարումով: Կրթական համակարգի կադրային կազմը իր մասնագիտական և գիտագործնական փորձով դեռևս չի համապատասխանում ժամանակակից պահանջներին: Ավագ սերունդը դժվար է վերափոխվում, իսկ կրտսեր սերունդը չունի անհրաժեշտ փորձ և

հմտություններ: Ներտությունը, արտաքին գործոնների նկատմամբ թույլ արձագանքը, մեծապես պայմանավորված են անհրաժեշտ որակավորում ունեցող դասախոսական և վարչական երիտասարդ կադրերի պակասով:

Ուսումնագիտական անձնակազմի սոցիալական վատ վիճակը, որը պայմանավորված է ցածր աշխատավարձով, կրթության համակարգը դարձնում է ցածր գրավչություն ունեցող մասնագիտական գործունեության ոլորտ, որն էլ դժվարացնում է սերնդափոխության բնականոն ընթացքը:

Միաժամանակ թերի են հանրակրթական և բարձրագույն մասնագիտական կրթության քաղաքականության մշակման, ձևավորման և իրականացման գործընթացում հասարակական և մասնագիտական կազմակերպությունների ընդգրկելու մեխանիզմները:

Կրթական կառավարման բոլոր մակարդակներում առկա է կառավարչական կարողությունների և կառավարման արդյունավետ մեխանիզմների զարգացման անհրաժեշտություն:

Կրթական համակարգի զարգացման, կազմակերպման և կառավարման արդյունավետ ձևերի ու տեխնոլոգիաների ներդրման համար անհրաժեշտ է բարձրակարգ պրոֆեսորադասախոսական և վարչակառավարչական անձնակազմ:

Կրթական համակարգը դեռևս էական դեր չունի հանրապետության տնտեսության զարգացման խնդիրներում, միչդեռ առանց կրթական համակարգի անհատական բարեփոխման անհնարին կլինի ապահովել ոլորտի զարգացման շարունակականությունը և գիտելիքահենք տնտեսության ու հասարակության ձևավորումը: Բարձրորակ մարդկային կապիտալի առկայությունը ժամանակակից տնտեսական զարգացման հիմնական նախապայմանն է և առանց դրա անհնար է ապահովել երկարաժամկետ ու կայուն տնտեսական զարգացում:

Կրթական համակարգը պետք է հանդիսանա բարձր մտավոր և ստեղծագործական ունակություններով օժտված, միջազգային մակարդակներում մրցունակ, գիտության և բարձր տեխնոլոգիաների բնագավառի կադրերի պատրաստման պատասխանատուն ու երաշխավորը:

Չնայած վերջին տասնամյակում կրթության ոլորտում իրականացվում են լուրջ կառուցվածքային ու բովանդակային բարեփոխումներ, այնուամենայնիվ կրթական համակարգը դեռևս ի վիճակի չէ ամբողջովին իրականացնելու իր առաքելությունը; Անցումային այս երկար շրջանում, երբ իրականացվող բարեփոխումները դեռևս շոշափելի արդյունքներ չեն տալիս, կարծես թե հասարակության մեջ խորանում է վստահության անկումը բարեփոխումների և ընդհանրապես համակարգի ներուժի նկատմամբ:

Հայաստանի բուհերում բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի նոր կրթական ծրագրերը և համապատասխան նոր որակավորումները սկիզբ են առել ինքնուրույն և չկոորդինացված, միասնական համակարգի պահանջների բացակայության պայմաններում: Հաստատված պետական կրթական չափանիշները չեն պարունակում որակավորումների հստակ բնութագրիչներ և չեն կարող բավարար հիմք ծառայել ազգային որակավորումների ու դիպլոմների միջպետական ու միջբուհական համադրելիության ճանաչման համար: Բացի այդ Բոլոնիայի գործընթացի պահանջներից բխող նոր որակավորումները ներմուծվել են առանց դիպլոմի եվրոպական նմուշի հավելվածի ներդրման, ինչը նույնպես խոչընդոտում է բարձրագույն կրթության հայաստանյան որակավորումների և դիպլոմների համադրելիությանը և ճանաչելիությանը եվրոպական կրթական տարածքում:

Մյուս կողմից Բոլոնիայի սկզբունքներով ուղղորդվող բարձրագույն կրթության բարեփոխումները կոչված են օգնելու մեզ հարմարվելու ձևավորվող գիտելիքահենք տնտեսության և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին, բարձրացնելու մեր մրցունակությունը, արտաքին գրավչությունը և շրջանավարտների ծառայունակությունը, ընդլայներու բուհերի սոցիալական առաքելությունը և մասնակցությունը ժողավրդավարական ժամանակակից հասարակության և ինովացիոն տնտեսության կառուցման գործընթացներին:

Կրթական կրեդիտների վրա հիմնված ուսումնական գործընթացի կազմակերպումը ծրագրային փոփոխություններին զուգահեռ պահանջում է նաև ուսումնական գործընթացի կառավարման հետ կապված կառուցվածքային և կազմակերպական վերափոխումներ, որոնք թելադրված են կրեդիտային հենքով

կառուցված ,,ճկուն'' ուսումնական ծրագրերի և անփոփոխ ակադեմիական խմբերից՝ առարկայական ժամանակավոր հոսքերի անցմանը:

Բարձրագույն կրթության եվրոպական տարածաշրջանին ինտեգրումը չպետք է խոչընդոտի արդեն ձևավորված ազգային կրթական որակավորումների դրական միտումների պահպանմանը, այլ անհրաժեշտ է որոշակի հավասարակշռություն պահպանել բազմազանության և միասնականության միջև, որպեսզի յուրաքանչյուր ազգային շրջանակ ունենա բավականաչափ ընդհանուր գծեր, սովորողների շարժունությունը դյուրին դարձնելու, միաժամանակ ազգային բուհերին պահպանելու իրենց ավանդույթներն ու ուժեղ կողմերը:

Դեռևս խնդիր է բարձրագույն կրթության երկու աստճանների՝ բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի բնական տարանջատումը, առաջինի ճանաչումը աշխատաշուկայում որպես գլխավոր մասնագիտական աստիճանի, իսկ երկրորդը՝ ապագա գիտական ոլորտի անցման ուղի:

Նշված խնդիրների լուծման, կրթական համակարգի բարեփոխումների իրականացման գործում իր ուրույն դերակատարումն ունի Հայաստանի Պետական Ագրարային Հալսարանը որպես երկրում ագրարային ոլորտի բոլոր բնագավառների համար կադրեր պատրաստող միակ բուհ:

Ագրարային համալսարանը իր ներկա կարգավիճակով, իր ուսումնագիտական պոտենցիալով և իր գործունեությամբ հանդիսանում է երկրում մեծ թափ ստացած ու շարունակվող կրթական բարեփոխումներ իրականացնող առաջատար բուհերից մեկը:

Բոլոնիայի գործընթացների զարգացումներով պայմանավորված՝ եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) ստեղծումը ներկա գլոբալացվող աշխարհում ժամանակի հրամայականն է, որի պայմաններում հայկական կրթական ոլորտում Ագրարային համալսարանում իրականացվող բարեփոխումների ընթացքը այլևս դարձել է անշրջելի:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի պետական ագրարային համալսարանը լինելով Հայկական գյուղատնտեսական և Երևանի անասնաբուժական ինստիտուտների իրավահաջորդն ու ավանդույթների կրողը՝ հանրապետությունում ագրարային ոլորտի բարձրագույն կրթությամբ մասնագետներ պատրաստող միակ կրթական հաստատությունն է:

Հայաստանի պետական ագրարային համալսարանի առաքելությունն է համակենտրոնացնելով կրթության ու գիտության կադրային և նյութական ռեսուրսները, ինտեգրելով գիտական հիմնարար հետազոտությունների արդյունքները և բարձր նվաճումները, ինտենսիվ ավելացնելով հետազոտական ներուժը և ապահովելով որակյալ կրթություն՝ Հայաստանում ու տարածաշրջանում դառնալ ագրարային ոլորտի աշխատաշուկայի ժամանակակից պահանջները բավարարող և դրանց դինամիկ փոփոխությունները հաշվի առնող առաջատար կրթական, գիտահետազոտական և խորհրդատվական ծառայություններ մատուցող կենտրոն:

Համալսարանն իր ապագան պետք է կառուցի հաշվի առնելով երկրի սոցիալ-տնտեսական զարգացման դինամիկան, Հայաստանի մուտքը համաշխարհային տնտեսական հարթություն, արտադրության, կրթության և հասարակական կյանքի այլ ոլորտներում նոր տեխնոլոգիաների հանդես գալը, ինչպես նաև Հայաստանում ինֆորմացիոն հասարակության ձևավորումը:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Համալսարանն օգտագործելով իր մարդկային և նյութական ողջ ներուժն ու կարողությունները՝ դառնալու է ազգային կրթության ու գիտության բնագավառում ազգային ընդհանուր շահերը արտահայտող, ազգային ու միջազգային մակարդակներում իր կողմից մատուցվող ծառայությունների համադրելիությունը, մրցունակությունը և թափանցիկությունը ապահովող, աշխատաշուկայի հարափափոխ պահանջներին համապատասխան ուսումնառողների կոմպետենցիաների ձևավորմանը նպաստող կրթական միջավայր:

Համալսարանը հանդես է գալու որպես գիտելիք ու առաջավոր տեխնոլոգիաներ տարածող, կրթական ու հետազոտական ինովացիոն գործունեություն իրականացնող, ուսանողակենտրոն կրթական միջավայր ու կրթության լայն մատչելիություն ապահովող, ձևավորված որակի մշակույթ ունեցող հաստատություն, որը կծառայի երկրին, ազգին ու աշխարհին:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Երկրի կայուն զարգացման, մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության նախադրյալներից մեկը որակյալ կրթության կազմակերպումն ու իրականացումն է:

Կրթության որակի, արդյունավետության և մատչելիության բարձրացման միջոցով կրթության առաջանցիկ զարգացումը մարդկային զարգացման ապահովման քաղաքականության հիմնական գերակայությունն է:

Կրթության զարգացման հեռանկարը պետք է դիտարկել երկրի ընդհանուր զարգացման, ազգային և պետական անվտանգության ապահովման հետևյալ հիմնական նպատակադրումների համատեքստում՝ կրթության բնագավառում ապահովելով պետական քաղաքականության սկզբունքների իրականացումը.

1) անկախ պետականության ամրապնդման և քաղաքացիական հասարակության զարգացում,
2) աղքատության հաղթահարում և բարեկեցություն ապահովում,
3) կայուն տնտեսական աճի և մրցունակության ապահովում,
4) հայապահպանություն,
5) միջազգային և տարածաշրջանային համագործակցություն:

Կրթության համակարգի զարգացման ներկա փուլում Հայաստանի պետական ագրարային համալսարանի ռազմավարությունն է ընդունելով ժամանակակից մարտահրավերները՝ արձանագրել հիմնախնդիրների լուծման և առաջընթացի այնպիսի արդյունքներ, որոնք կբարձրացնեն համալսարանի հեղինակությունը՝ որպես Հայաստանում և տարածաշրջանում ագրարային ոլորտի բարձորակ մասնագետներ պատրաստող և բարձրարժեք գիտական հետազոտություններ իրականացնող գիտակրթական կենտրոնի:

2012-2017թթ. ընկած ժամանակահատվածի համար համալսարանի զարգացման հիմնական ռազմավարական խնդիրները բխում են նրա հատուկ դերից, որպես մեր հանրապետության միակ ագրարային բարձրագույն ուսումնական հաստատության:

Ազգային համատեքստում համալսարանի ռազմավարական զարգացման հիմնական խնդիրները հետևյալներն են.

- ԱՊՀ, եվրոպական և միջազգային գիտական ու կրթական միջավայրում համասլարանի վստահ և իրավահավասար մասնակցության ապահովում,
- Ագրարային ոլորտում որակյալ բարձրագույն մասնագիտական կրթությամբ մասնագետների պատրաստելու և որակյալ գիտական ծառայություններ մատուցելու առաքելությամբ, հանրապետության առաջատար բուհի հնարավորություններին և նպատակներին համապատասխան՝ համալսարանի զարգացման և կառավարման արդյունավետության բարձրացում,
- Համալսարանի տարածաշրջանային և միջազգային համագործակցության ընդլայնում և կատարելագործում,
- Գիտական հետազոտությունների իրականացման, տնտեսական գործունեության և վճարովի կրթական ու խորհրդատվական ծառայությունների մատուցման միջոցով՝ համալսարանի տնտեսական ինքնուրույնության ու ինքնաբավության ապահովում:

Համալսարանի ռազմավարական նպատակները ըստ գործունեության ուղղությունների նպատակահարմար է բաժանել հետևյալ ոլորտների.

- կրթական գործունություն,
- հետազոտություն և զարգացում,
- խորհրդատվական գործունեություն,
- կառավարման համակարգ,
- նյութատեխնիկական բազայի զարգացում,
- շարժունության խթանում,
- ֆինանսական գործունեություն,
- սոցիալական ոլորտ,
- տեղեկատվական համակարգեր,
- արտաքին կապեր և միջազգայնացում:

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Համալսարանի կրթական ոլորտի զարգացումը պետք է առաջնորդվի ,,Կրթությանը՝ որպես Հայաստանի մրցակցային հիմնական առավելություն" տեսլականով:

Համալսարանի՝ մինչև 2017 թվականի զարգացման համար ուղենշային դրույթներ պետք է լինեն «Հազարամյակի հուշագրի» և «Կրթություն բոլորի համար» գլոբալ շարժման սահմանած նպատակները, ինչպես նաև Բոլոնիայի հուշագրի և «Կրթություն հանուն կայուն զարգացման» ռազմավարության սկզբունքները:

Համալսարանի կրթական գործունեության ներկա փուլի ռազմավարությունն է, հաշվի առնելով ժամանակակից արտաքին և ներքին մարտահրավերները, սահմանել հիմնախնդիրների լուծման ուղիներ և առաջընթացի այնպիսի արդյունքներ, որոնք կամրապնդեն համալսարանի դիրքերը՝ որպես Հայաստանում և տարածաշրջանում աշխատաշուկայի ժամանակակից պահանջները բավարարող ագրարային ոլորտի որակյալ մասնագետներ պատրաստող կենտրոն:

Համալսարանը պետք է մշակի ու ներդնի աշխատաշուկայի ժամանակակից պահանջները բավարարող և դրանց փոփոխությունները հաշվի առնող կրթական ծրագրեր ու իրականացնի հասարակության կողմից Համալսարանի մասնագիտական ճանաչումն ապահովող ուսումնական գործունեություն:

Կրթության զարգացման գլխավոր նպատակների իրականացումը պահանջում է էականորեն բարձրացնել կրթության կառավարման համակարգի գործունեության արդյունավետությունը, զարգացնել կառավարման օղակների և պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական ներուժը, արդիականացնել կրթության բովանդակությունն՝ ապահովելով դրա համապատասխանությունն ագրարային ոլորտի աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին:

Կրթության առաջընթացն առավել նպատակային ու արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է բարելավել կրթության բովանդակությունն ու չափորոշիչները: Բովանդակային բարեփոխումները պետք է ուղղված լինեն կրթության, տնտեսության և հասարակության արդի պահանջներին համապատասխանեցմանը:

Կրթության ոլորտի բարեփոխումների և զարգացման ծրագրերի հաջողությունն ու արդյունավետությունը պայմանավորված են ուսանողական համակազմի անհրաժեշտ համալրմամբ, կրթության որակի ապահովմամբ, աշխատաշուկայի պահանջները բավարարող մասնագիտությունների կրթական ծրագրերի առկայությամբ և պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական պատրաստվածությամբ ու նրանց կարողությունների հզորացմամբ:

Կրթության ոլորտի զարգացման տեմպերը և բարեփոխումների հաջողությունը մեծապես կախված է նաև կառավարման օղակների ինստիտուցիոնալ ու մարդկային կարողությունների և հնարավորությունների արդյունավետ կառավարումով:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Կրթության ոլորտում Համալսարանի ներկա փուլի նպատակներն ու խնդիրները սահմանվում են՝ ելնելով արտաքին և ներքին միջավայրում առկա մարտահրավերից.

- կրթական ծառայությունների շուկայում մրցակցության առկայություն,
- կրթության նկատմամբ աշխատաշուկայի պահանջների փոփոխականությունը,
- համաշխարհային կրթական տարածքին ինտեգրման անհրաժեշտությունը
- կրթության արդիականացման անհրաժեշտությունը,
- կրթական գործունեության զարգացման գիտականորեն հիմնավորված հայեցակարգի բացակայությունը,
- մասնագետներ պատրաստելու որակի նկատմամբ աշխատաշուկայի պահանջներին համալսարանի կողմից թույլ արձագանքը,
- անձնակազմի հմտությունների ու կարողությունների և նյութատեխնիկական բազայի անբավարար մակարդակը,
- պետական կրթական չափորոշիչներին և Որակավորումների ազգային շրջանակին մասնագիտությունների կրթական ծրագրերի ոչ լիարժեք համադրելիությունը:

Նպատակը ***Աշխատաշուկայի ժամանակակից պահանջները բավարարող, ազգարային ոլորտի մրցունակ ու բարձրորակ մասնագետների պատրաստում, կրթական գործընթացների կազմակերպման ու կառավարման արդյունավետ մեխանիզմների ձևավորում ու կատարելագործում և կրթական գործընթացների արդիականացում:***

Խնդիրները

1. Կրթական գործունեության զարգացման գիտականորեն հիմնավորված հայեցակարգի մշակում ու հաստատում, աշխատաշուկայի պահանջարկին

համապատասխան նոր մասնագիտությունների ու մասնագիտացումների վերակառուցման ճկուն համակարգի ստեղծում,

2. Բարձրագույն մասնագիտական կրթության կազմակերպման ու զարգացման ոլորտում միջազգային ինտեգրացիոն գործընթացներին ակտիվ մասնակցության ապահովում,
3. Ուսուցանման մեթոդների օպտիմալացում, ուսուցման գործընթացներում դասախոսների աշխատանքի արտադրողականությունը և ուսումնական գործունեության կազմակերպման արդյունավետությունը բարձրացնող նոր կրթական տեխնոլոգիաների ներդրում,
4. Ազգարային ոլորտի ժամանակակից պահանջները բավարարող և դրանց փոփոխությունները հաշվի առնող կրթական ծրագրերի մշակում ու ներդրում, կրթության բովանդակության և կրթական չափանիշների շարունակական բարելավում, ուսանողների ինքնուրույն աշխատանքի և ինքնակրթության դերի բարձրացմանը միտված ուսումնական գործընթացների աստիճանական վերակառուցում,
5. Համալսարանի կրթական տարածքի ընդլայնում, դեպի շրջանները կրթական ծառայությունների մատուցման տեղաշարժի ապահովում, հեռավար ուսուցման համակարգի ստեղծում և կատարելագործում:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվի առնելով երկրում ժողովրդագրական բացասական միտումները և դրա զարգացման հեռանկարը՝ անհրաժեշտ է հստակ միջոցառումներ կիրառել համալսարանի ընդունելության համակարգի կատարելագործման և ուսանողական համակազմի անհրաժեշտ թվաքանակ ու բազմազանություն ապահովելու համար: Հանրակրթության նոր համակարգի՝ ավագ դպրոցների անցնելու կապակցությամբ խնդիր է առաջանում ապահովել ագրարային ուղղվածություն ունեցող ավագ դպրոցների և համալսարանի առանձին խումբ մասնագիտությունների ուսումնական ծրագրերի համապատասխանությունը և համագործակցությունը:

Նպատակը

Համալսարանի ընդունելության համակարգի կատարելագործում, ուսանողական համակազմի համալրման ընդլայնումով՝ դիմորդների կայուն հոսքի ապահովում:

Խնդիրները

1. Ուսումնական ստորաբաժանումների, ուսանողական կառույցների, գործատուների և այլ շահագրգիռ կազմակերպությունների ընդգրկումով՝ համալսարանի գովազդարշավի ընդլայնում և ակտիվացում;
2. ճանաչողական այցերի, օլիմպիադաների անցկացման, նախապատրաստական դասընթացների կազմակերպման և այլ միջոցառումների միջոցով ավագ դպրոցների աշակերտների հետ տարվող աշխատանքների ընդլայնում, դեպի համալսարան մուտքը դյուրացնող միջոցառումների իրականացում,
3. Ավագ դպրոցների և վարժարանների հետ համատեղ կրթական գործունեության իրականացման երկարաժամկետ համաձայնագրերի կնքում, մայրաքաղաքում և մարզերում հենակետային դասարանների ստեղծում և համալսարանի ֆակուլտետների հետ դրանց կապի ակտիվացում, հանրապետության բոլոր մարզերում դիմորդների հավաքագրման

աշխատանքների ծավալում, տեղերում դիմորդների հետ տարվող աշխատանքների հենակետերի ստեղծում:

4. Աշխատաշուկայի պահանջներին ու միտումներին համապատասխան, պոտենցիալ դիմորդների նախասիրությունների ու կողմնորոշվածության, կրթական կարիքների, արտաքին բարենպաստ հնարավորությունների, ներքին չօգտագործված կարողությունների գնահատման և համալսարանի ընդունելության կառուցվածքի, չափաքանակների ու դիմորդների թվաքանակի վերլուծության իրականացում:
5. Ուղենիշ ունենալով ՀՀ գյողատնտեսության զարգացման գերակայությունները, հաշվի առնելով մասնագիտությունների կանխատեսվող պահանջարկը և դրանց իրականացման համար անհրաժեշտ առկա դասախոսական, նյութատեխնիկական և ֆինանսական ներուժը՝ ըստ ուսուցման ձևերի, կրթական աստիճանների և մասնագիտությունների՝ դիմորդների ընդունելության պլանավորում:
6. Հավաքագրման և ուսուցման կազմակերպման համալիր միջոցառումների ներդրման միջոցով բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում օտարերկրյա ուսանողների համակազմի ավելացում:
7. Անգլերեն լեզվով ուսուցում իրականացնելու համար անհրաժեշտ կրթական ծրագրերի, ծրագրային փաստաթղթերի, ուսումնամեթոդական գրականության, օժանդակ նյութերի, ուղեցույցների, դասընթացների տեղեկագրերի ապահովում, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի պահանջարկված մասնագիտությունների գծով օտարերկրյա ուսանողների համար անգլալեզու և ռուսալեզու ուսուցում կազմակերպելու համար դասախոսական կազմի համար վարժանքային ծրագրերի կազմակերպում:
8. Դոնոր երկրների ցանկի ընդլայնում, տարածաշրջանի երկրներում դիմորդների հավաքագրման աշխատանքների ակտիվացում, հայաշատ երկրներից սփյուռքահայ դիմորդների ներհոսքի խթանում և ակտիվացում, <<Ուսումնական մեկ կիսամյակ հայրենիքում>> կրթական ծրագրի իրականացում:

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԵՎ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Բոլոնիայի գործընթացի կարևորագույն ուղղություններից է Եվրոպական կրեդիտների փոխանցման համակարգին (ECTS) համապատասխան՝ ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով համալսարանում բարձրագույն կրթության կազմակերպումը:

ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված ,,Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործման ժամանակացույցի'' պահանջներին համապատասխան համալսարանում մեծ ծավալի աշխատանքներ են տարվում կրեդիտային համակարգին անցման ուղղությամբ:

Համալսարանում գործող մասնագիտությունների ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը վերանայվել են մոդուլային սկզբունքով և կրեդիտային հենքով մշակվել և ներդրվել է ուսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգը, կազմվել ու համալսարանի ուսումնական ստորաբաժանումներին և ուսանողությանն են տրամադրվել ,,Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման'' և ,,Ուսանողների բազմագործոնային գնահատման'' մեթոդական ուղեցույցները:

Այժմ համալսարանի առաջնահերթ խնդիրներից է ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի լիարժեք ներդրումը և դրա ճշգրիտ օգտագործումը՝ կրեդիտային կառուցվածքով ճկուն ծրագրերի ստեղծման համար:

Այս ոլորտում առկա են մի շարք արտաքին և ներքին մարտահրավերներ.

- կանոնակարգված չէ մնում համապատասխան ծրագրային միավորների կրթական վերջնարդյունքների ու ուսանողական լրիվ աշխատածավալի հիման վրա կրեդիտների հաշվարկը և շնորհումը,
- խնդրահարույց է նախորդող ուսումնական շրջաններում և միջբուհական շարժունության ծրագրերում ուսանողների կուտակած կրեդիտները այլ բուհերի կողմից անարգել ճանաչման գործընթացը,

- իրականացված կառուցվածքային փոփոխությունները և ակադեմիական կրեդիտների ներդրման գործընթացը չեն ուղեկցվում կրթական ծրագրերի բովանդակային փոփոխություններով:

Նպատակը

Համալսարանում ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի ներդրման մեխանիզմների կատարելագործում և հետագա զարգացում:

Խնդիրները

1. Համալսարանի բոլոր կրթական ծրագրերում (միջին մասնագիտական, մագիստրոսական, հետազոտողի կրթական ծրագիր) կրեդիտային համակարգի ներդրում:
2. Մոդուլային սկզբունքով և կրեդիտային հենքով մասնագիտությունների ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի մշակման, վերանայման և մոնիթորինգի իրականացման մեխանիզմների կատարելագործում, կրեդիտային համակարգի ներդրմանը համահունչ կրթական ծրագրերի բովանդակային փոփոխությունների իրականացում:
3. Ուսանողների գիտելիքների բազմագործոն գնահատման համակարգի հետագա կատարելագործում և զարգացում:
4. Կրեդիտային համակարգով ուսուցման կազմակերպման խորհրդատու (խնամակալ) դասախոսների ինստիտուտի ստեղծում և կատարելագործում, կրեդիտային համակարգի կիրառման արդյունավետության բարձրացման նպատակով ,,Էլեկտրոնային դեկանատի'' ստեղծում:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

2005 թ.-ին Հայաստանը պաշտոնապես միացավ Բոլոնիայի գործընթացին և ինտեգրվեց Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին (ԵԲԿՏ), որը ենթադրում է բարձրագույն և շարունակական կրթական համակարգում եվրոպական չափանիշներին համապատասխան՝ խորքային փոփոխությունների իրականացում:

Եվրոպական կրթական տարածքին Հայաստանի ինտեգրման ուղղությամբ կատարվող կարևորագույն ուղղություններից մեկը Եվրոպական չափանիշներին համապատասխան որակի գնահատման և ապահովման ազգային համակարգի ստեղծումն է: ՀՀ կառավարության 2008թ.-ի որոշմամբ հիմնադրվեց «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը» (ՈԱԱԿ), որի նպատակն է աջակցել մասնագիտական ուսումնական հաստատություններին՝ ստեղծելու կրթության որակի ապահովման ներհամալսարանական համակարգ և մշակույթ:

Մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովումը Հայաստանի մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգի հիմնական տարրերից է: Որակի ներքին ապահովման գործընթացներն ուսումնական հաստատության գործունության պարտադիր մաս պետք է կազմեն: Արտաքին և ներքին միջավայրի մարտահրավերները պահանջում են վերաիմաստավորել կրթական գործընթացի որակի հասկացությունը, ինչպես դրա կազմակերպման այնպես էլ շրջանավարտի որակի գնահատման ցուցանիշների պահպանման տեսանկյունից: Այս ուղղությամբ հիմնական սկզբունքը պետք է լինի ,,շրջանավարտի որակի նկատմամբ պահանջները ձևավորում է գործատուն'':

Բոլոնիայի գործընթացը խթանում է նաև բուհերում մասնագիտական մասնագիտական կրթության որակի ապահովման ներքին համակարգերի ստեղծման, ինչպես նաև որակի ներքին ապահովման, ինքնավերլուծության, ինքնագնահատման և հավատարմագրման գործընթացները:

Համալսարանի կողմից իրականացվող կրթության որակով է պայմանավորված կրթական ծառայությունների շուկայում համալսարանի հեղինակությունը և մրցունակությունը, հետևաբար նաև աշխատաշուկայի կողմից շրջանավարտների

պահանջարկվածության բարձրացումը: Ուստի այսօրվա հրամայականներից է համալսարանում որակի ներքին ապահովման համակարգի ձավորումը և հետագա զարգացումը: Համալսարանն իր որակի ապահովման մեթոդաբանությունը ձևավորելիս պետք է հաշվի առնի համալսարանում արդեն ձևավորված որակի մշակույթը, ավանդույթները և սահմանված նպատակների ու խնդիրների իրականացման սեփական ներուժը:

Որակի ներքին ապահովման համալսարանական համակարգի կառուցումը պետք է ուղղորդվի Եվրոպական (ENQA) ստանդարտներում ձևակերպված հիմնարար սկզբունքներով, որոնց հիման վրա ձևավորվում են ներքին ապահովման համալսարանական համակարգի հիմնական նպատակները:

2011 թ.-ին համալսարանում իրականացվող կրթական բարեփոխումների արդյունավետությունը բարձրացնելու և ինքնավերլուծության ու հավատարմագրման գործընթացներն իրականացնելու նպատակով ուսումնամեթոդական կենտրոնի կազմում ստեղծվեց <<Որակի վերահսկողության և ինքնավերլուծության>> մասնագիտացված բաժինը: Համալսարանում ստեղծված որակի ներքին ապահովման համակարգը կատարելագործման և հետագա զարգացման կարիք ունի:

ՀՀ կառավարության որոշումով հաստատված <<ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների>> և <<ՀՀ-ում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ու դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգի>> համաձայն համալսարանն այժմ իրականացնում է փորձնական ենթակառուցվածքային (ինստիտուցիոնալ) ինքնավերլուծության ինքնագնահատման և հավատարմագրման գործընթացներ:

Նպատակը	***Բոլոնիայի գործընթացի պահանջներին համապատասխան որակի ապահովման համալսարանական համակարգի մշակում, ներդրում և հետագա զարգացում:***
Խնդիրները	

1. Համալսարանի որակի ապահովման քաղաքականության, ընթացակարգերի և ռազմավարության մշակում ու հաստատում, համալսարանին և նրա միջա-

վայրին համապատասխան ու հարմարունակ Որակի ապահովման համալսարանական մոդելի ընտրություն և կազմակերպման կառուցվածքի ձևավորում,

2. Որակի ապահովման համալսարանական համակարգի և նրա հիմնական գործառույթների գործառումն իրականացնող հստակ կանոնների և ընթացակարգերի սահմանում, Որակի ապահովման մասնաճյուղային և ֆակուլտետային ենթահամակարգերի ձևավորում,
3. Համալսարանական հանրության շրջանում որակի ապահովման համալսարանական համակարգի ձևավորման անհրաժեշտության, հրատապության և ռազմավարության վերաբերյալ իրազեկում և ներբուհական համընդհանուր հավանության ձեռքբերում, որակի ապահովման ներքին և արտաքին աուդիտների պարբերական իրականացում, համակարգի հետագա լրամշակում ու կատարելագործում,
4. ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշներին համապատասխան՝ համալսարանի փորձնական ենթակառուցվածքային (ինստիտուցիոնալ) հավատարմագրման գործընթացի կազմակերպում և իրականացում:

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Համալսարանը պետք է ունենա պաշտոնական մեխանիզմներ՝ իր կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների հաստատման, մոնիթորինգի և պարբերական վերանայման համար:

Մասնագիտությունների կրթական ծրագրերը պետք համապատասխանեն համալսարանի առաքելությանը, պետական կրթական չափորոշիչներին և նպաստեն շարժունությանը և միջազգայնացմանը:

Համալսարանը պետք է ձգտի ձեռք բերել և պահպանել ուսանողների ու այլ շահակիցների վստահությունը բարձրագույն կրթության նկատմամբ՝ որակի ապահովման արդյուայավետ գործողություններով, որոնք պետք է երաշխավորեն, որը կրթական ծրագրերը պատշաճ ձևով են մշակված, ենթարկվում են կանոնավոր մոնիթորինգի և պարբերաբար վերանայվում են:

Նպատակը	***Համալսարանի կրթական ծրագրերի ու շնորհվող որակավորումների հաստատման, մոնիթորինգի և պարբերական վերանայման մեխանիզմների մշակում ու հաստատում:***
Խնդիրները	

1. Մասնագիտությունների կրթական ծրագրերի պլանավորում և մշակման արտոնում, կրթական ծրագրերի նկարագրերի սահմանում, մշակում ու հաստատում,
2. Համալսարանում առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման քաղաքականության և ընթացակարգերի մշակում և հաստատում,
3. Մասնագիտությունների կրթական ծրագրերից և դրանց ելքային արդյունքներից ուսանողների, շրջանավարտների և գործատուների բավարարվածության ուսումնասիրում,
4. Ագրարային կրթության միասնական դաշտում, ընդհանուր որակավորում շնորհելու նպատակով, ԱՊՀ երկրների ագրարային համալսարանների ասոցիացիայում ոլորտի մասնագիտությունների կրթական

ծրագրերի առավելագույն համապատասխանեցում, մասնագիտություն-ների կրթական ծրագրերի համար առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացում,

5. Պետական և մասնավոր գործատուների և այլ շահակիցների մասնակցությամբ մասնագիտությունների կրթական ծրագրերի արդիականության վերլուծության համակարգի ստեղծում, կրթական ծրագրերի վերանայման և գնահատման գործընթացներում ագրարային ոլորտի գործատուների ակտիվ ներգրավում, կրթական ծրագրերի մշակման հարցում համակարգված մոտեցումների ապահովում,
6. Ագրարային մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման գործընթացներում միջազգային և միջբուհական համագործակցության ընդլայնում, գիտակրթական ծրագրերի, մեթոդական մշակումների, մանկավարժական կադրերի պատրաստման և փոխանակման ոլորտ-ների ընդարձակում ու կատարելագործում:

ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

ԵԿԲՏ –ում ուսանողների մասնակցությունը համալսարանի ակադեմիական և կառավարման գործընթացներին խիստ կարևորում է, քանի որ ուսանողները հանդիսանում են բարձրագույն կրթության հիմնական շահառուները: Վերջին տարիներին համալսարանում մի շարք կարևոր քայլեր են իրականացվել ուսանողների դերի և կառավարման գործընթացներում ներգրավվածության բարձրացման ուղղությամբ:

Բոլոնիայի գործընթացի հետագա զարգացման հիմնախնդիրներից ու մարտահրավերներից մեկը ուսանողակենտրոն ուսուցման խթանումն է:

Հայաստանյան բուհերում դեռևս գերակշռում են ուսուցման ավանդական մեթոդները, որոնք չեն խրախուսում ուսանողների ինքնուրույն աշխատանքի, վերլուծական մտածողության և անհրաժեշտ կոմպետենցիաների ձևավորումը: Չնայած օրենսդրական հիմքերի առկայությանը՝ ուսանողների իրական մասնակցությունը բուհերի կառավարման և ակադեմիական գործընթացներին դեռևս բավարար չէ: Միջազգային ուսանողական կառույցների հետ մեր ուսանողական կառույցների կապերը թույլ են, իսկ դրանց աշխատանքներին հայաստանյան ուսանողները դեռևս շատ քիչ են մասնակցում:

Նպատակը ***Համալսարանի կրթական համակարգում ուսանողակենտրոն ուսուցման համակարգի մշակում ու ներդրում:***

Խնդիրները

1. Ուսանողակենտրոն ուսուցման, կրթական վերջնարդյունքների հենքով կրթական ծրագրերի կազմակերպման նպատակով՝ ուսանողների կարիքների պարբերական գնահատման իրականացում, ուսանողակենտրոն ուսուցմամբ կրթության կազմակերպման մեթոդական հենքի ստեղծում,
2. Որակի ապահովման համալսարանական համակարգում ուսանողների դերի և պատասխանատվության ձևակերպում և որակի ապահովման համալսարանական բոլոր գործընթացներում ուսանողների համարժեք մասնակցության ապահովում,

3. Մասնագիտությունների կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման ու դասախոսների աշխատանքի գնահատման գործընթացներին ուսանողների մասնակցության ապահովում,

4. Մասնագիտությունների կրթական ծրագրերից, դասախոսական և վարչական կազմի աշխատանքից, ուսումնական ռեսուրսներից ու օժանդակ ծառայություններից ուսանողների բավարարվածության ուսումնասիրման և կարիքների վերահանման նպատակով՝ համալսարանական միասնական համակարգի մշակում և ներդնում,
5. Ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգի և ժամանակացույցի մշակում և հաստատում, ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմնի աշխատանքների ակտիվացում և դերի բարձրացում,
6. Ուսանողների կարիերայի զարգացման նպատակով խորհրդատվական ծառայությունների համակարգի ստեղծում և կատարելագործում, համալսարանում իրականացվող գիտահետազոտական աշխատանքներում ուսումնառողների մասնակցության ապահովման քաղաքականության և ընթացակարգերի մշակում ու հաստատում,
7. Եվրոպական ուսանողական կառույցների հետ համալսարանի ուսանողական խորհրդի համագործակցության հնարավորության ստեղծում:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Դաստիարակչական գործունեությունը կրթական գործընթացի անքակտելի մասն է, քանզի կրթության կազմակերպման արդյունավետությունն ու որակն ուղղակիորեն կախված են ուսուցման և դաստիարակչական գործընթացների փոխշաղկապվածությունից:

Ուսանողների դաստիարակումն ընկալվում է իբրև դասախոսների նպատակաուղղված գործունեություն, որը միտված է համամարդկային և ազգային արժեքների հիման վրա՝ ուսանողների հոգևոր զարգացման համար պայմանների ստեղծմանը, նրանց ինքնահաստատմանը, բարոյական, քաղաքացիական և մասնագիտական կայացմանն ու յուրաքանչյուր ուսանողի՝ որպես անհատի ինքնաարտահայտմանը:

Համալսարանում ուսանող երիտասարդության շրջանում տարվող դաստիարակչական աշխատանքների հիմնական նպատակը բարձր մշակույթով, կիրթ, սոցիալապես ակտիվ և հայրենասեր քաղաքացու հատկանիշներով օժտված ապագա մասնագետի բազմակողմանի զարգացումն է: Այն իրականացվում է թե՛ լսարանային պարապմունքների ընթացքում, թե՛ ուսումնական պարապմունքներից դուրս՝ ուսանողի և դասախոսի ազատ ժամանակի ընթացքում:

Հատկապես կարևորելով ուսանողների մասնագիտական և աշխատանքային դաստիարակությունը՝ համալսարանում հատուկ ուշադրություն է պետք դարձնել ուսանողների մոտ միջանձնային, գործարար կապերի ստեղծման ունակությունների և ձեռք բերվող մասնագիտության առանձնահատկություններով ու բովանդակությամբ պայմանավորված՝ սոցիալական իմիջի ձևավորմանը: Դրա հետ մեկտեղ կարևորվում է նաև ուսանողների քաղաքացիական ու իրավական դաստիարակությունը, որը նպաստում է ուսանող երիտասարդության մոտ մարդու ազատությունների և իրավունքների նկատմամբ հարգանքի և բնության, հայրենիքի ու ընտանիքի հանդեպ սիրո դաստիարակմանը:

Ուսանողական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացումը նպաստում է ուսանողների մոտ ղեկավարի և առաջնորդի հատկանիշների, համատեղ աշխատանքի ունակությունների, ստեղծագործական կարողությունների դաս-

տիարակմանն ու զարգացմանը: Ուսանողների ստեղծագործական ունակությունների զարգացմանը նպաստում են նաև կազմակերպված հանգիստը, մշակութամասսայական փառատոների, մրցույթների և ստուգատեսների անցկացումը:

Ուսանողների ֆիզիկական դաստիրակությունն անհրաժեշտ է զարգացնել մարմնամարզական, մասսայական ու մարզական աշխատանքների գծով:

Կրթության արդիականացման ներկա պայմաններում անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնել ուսանող երիտասարդության դաստիարակման բովանդակության փոփոխության վրա:

Նպատակը

Ուսանողների հոգևոր զարգացման համար համամարդկային արժեքներին համահունչ պայմանների ստեղծում և բարձր արհեստավարժությամբ, կուլտուրայով, կրթվածությամբ ու սոցիալական ակտիվությամբ հայրենասեր քաղաքացու բարձր հատկանիշներով օժտված մասնագետների պատրաստում:

Խնդիրները

1. Համալսարանում դաստիարակչական աշխատանքների համակարգի ձևավորում, հոգևոր, բարոյական և հայրենասիրական դաստիարակություն, ուսանողների հանգստի և ստեղծագործունեության կազմակերպում, մարզական միջոցառումների անցկացում,
2. Բազմակողմանի զարգացած անհատի ձևավորման նպատակով՝ ուսանողների դաստիարակության հեռանկարային ծրագրերի մշակում և իրականացում,
3. Ուսանողական ինքնակառավարման համակարգի կատարելագործում,
4. Ուսանողության շրջանում առողջ ապրելակերպի պրոպագանդայի աշխատանքների իրականացում,
5. Ուսումնադաստիարակչական գործընթացի հնարավորությունների օգտագործմամբ՝ ուսանողների մոտ ժամանակակից գիտական աշխարհահայացքի և հիմնարար արժեքների ձևավորում, մասնագիտական, ստեղծագործական, իրավական, բնապահպանական և հայրենասիրական դաստիարակության իրականացում:

ԿԱԴՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Պրոֆեսորադասախոսական կազմը ուսանողների մեծամասնությանը մատչելի կարևորագույն ռեսուրսն է: Կարևոր է, որ դասախոսները ունենան դասավանդող առարկայի վերաբերյալ լիարժեք գիտելիքներ և խորը ընկալում, անհարժեշտ հմտություն և փորձ՝ դասավանդման տարբեր համատեքստերում դրանք ուսանողներին արդյունավետ կերպով փոխանցելու համար, ինչպես նաև դասավանդման որակի վերաբերյալ հետադարձ կապի ձեռքբերման կարողություն:

Ուսուցման որակն առաջին հերթին պայմանավորված է համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական ունակություններով և մանկավարժական կարողություններով: Համալսարանի կադրային ներուժն ավանդաբար եղել է համալսարանի ուժեղ կողմերից մեկը: Համալսարանի կարևորագույն խնդիրներից մեկը այժմ հանդիսանում է առկա ներուժի պահպանման ու զարգացման և գիտակրթական համակարգում աստիճանական սերնդափոխության համակարգի մշակումը: Ներկայումս համալսարանում սերնդափոխությունն իրականացվում է մագիստրանտների, ասպիրանտների և ստաժոր-դասախոսների պատրաստման համակարգի միջոցով:

Համալսարանը պետք է երաշխավորի, որ դասախոսական կազմի հավաքագրման և նշանակման գործընթացներն ապահովում են նոր աշխատակիցների մասնագիտական պատրաստվածության բավարար մակարդակը: Դասախոսական կազմին պետք է տրվեն դասավանդման հմտությունների զարգացման և կատարելագործման հնարավորություն, ինչը պետք է նաև խրախուսվի:

Համալսարանը ոչ բավարար հմտություններով դասախոսների համար պետք է ստեղծի մասնագիտական աճի հնարավորություններ և ունենա համապատասխան մեխանիզմներ՝ ազատվելու այնպիսի դասախոսներից, ովքեր կշարունակեն ցուցաբերել ցածր արդյունավետություն:

Համալսարանի կադրային ներուժի զարգացման ռազմավարության հրատապությունը պայմանավորված է մի շարք հիմնախնդիրների առկայությամբ.

- Հայաստանի կրթական համակարգի համաշխարհային կրթական տարածքին ինտեգրումով պայմանավորված՝ կրթական համակարգի արդիականացման անհրաժեշտությունը,
- դասախոսական և գիտահետազոտական աշխատանքների գրավչության նվազումը,
- միջազգային համագործակցության համար դասախոսական կազմի անբավարար կոմպետենտությունը
- դասախոսական կազմի՝ ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործման անբավարար կոմպետենտությունը
- դասախոսական կազմի որակավորման բարձրացման համար անբավարար ֆինանսավորումը,
- մրցակցային միջավայրի ձևավորման պայմանների բացակայությունը,
- տաղանդաշատ շրջանավարտներին համալսարանում «պահելու» դժվարությունները,
- պրոֆեսորադասախոսական անձնակազմի նյութական խրախուսման անկատար համակարգը:

Նպատակը

Կրթության արդիականացման և համալսարանի մրցունակության բարձրացման նպատակով՝ համալսարանի կադրային քաղաքականության շարունակական կատարելագործում, կադրային ներուժի զարգացում և դասավանդման գործընթացներում որակյալ դասախոսական կազմի ներգրավում:

Խնդիրները

1. Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ձևավորման համակարգի ստեղծում.

1.1. Համալսարանում իրականացվող բոլոր կրթական ծրագրերը և դասընթացները բավարար թվով որակյալ դասախոսներով, վարչական ու օժանդակ կազմով ապահովելու և շարունակական նորացման ու արդիականաց-

ման նպատակով՝ դասախոսական ու ուսումնաօժանդակ կազմի պլանավորում և տարակարգման իրականացում,

1.2. Պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի կադրերի ընտրություն և պաշտոնակալման և աշխատանքից հեռացման քաղաքականության և ընթացակարգերի մշակում և հաստատում,

1.3. Դասախոսական կադրերի մրցութային ընտրության համակարգի կատարելագործում

1.4. Համալսարանը երիտասարդ դասախոսներով համալրելու նպատակով ստաժոր-դասախոսի պատրաստման համակարգի գործունեության ընդլայնում,

1.5. Երիտասարդ գիտնականներին ու դասախոսներին օգնության հատուկ ծրագրերի մշակում և իրականացում, համալսարանում երիտասարդ կադրերի ամրագրման այլ խթանների համակարգի մշակում, լրացուցիչ վարձատվության համակարգի ստեղծում ու կատարելագործում, պրոֆեսորադասախոսական, գիտամանկավարժական կարգավիճակի բարձրացում:

2. Դասախոսական կազմի գործունեության գնահատում.

2.1. Դասախոսական կազմի որակավորման անընդհատ աճին, դասավանդման և հետազոտական աշխատանքների ակտիվությանը նպաստող դասախոսական կազմի գործունեության գնահատման քաղաքականության և մեխանիզմների ու գործիքների մշակում և ներդրում,

2.2. Համալսարանի կրթական առաքելությանը և նպատակներին համապատասխան՝ պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման ընթացակարգերի և չափորոշիչների հստակ սահմանում և հրապարակում, մասնագիտական կրթական ծրագրերի համար պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների սահմանում,

2.3. Դասախոսական կազմի գործունեության օբեկտիվ և անաչառ գնահատման նպատակով բազմակողմ ձևաչափով՝ աշխատանքային ընդգրկումով գնահատման գործընթացի համակարգի մշակում և իրականացում,

2.4. Դասախոսների գնահատման առավել հավաստի արդյուքներ ստանալու նպատակով՝ գնահատման անհատական (ինքնագնահատման, գնահատում ղեկավարի կողմից) և կոլեկտիվ (գնահատում ուսանողների ու գործընկերների կողմից) եղանակների կիրառում:

3. Պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման և կատարելագործման համակարգի ստեղծում և զարգացում

3.1. Դասախոսական, վարչական ու ուսումնաօժանդակ կազմի որակավորման բարձրացման և կատարելագործման հեռանկարային պլանի կազմում և հաստատում,

3.2. Դասախոսական կազմի տեսական գիտելիքների և գործնական հմտությունների շարունակական համալրման ու բարձրացման նպատակով որակավորման բարձրացման համակարգի կատարելագործում,

3.3. Կրթական ծրագրերի բովանդակության ու ելքային պահանջների, կրթական տեխնոլոգիաների ու մեթոդների զարգացմանը համահունչ՝ դասախոսների որակավորման մակարդակի բարձրացում

3.4. Տեղեկատվական և ինովացիոն, մանկավարժական նոր տեխնոլոգիաների ուսուցման, էլեկտրոնային գրադարանների օգտագործման, օտար լեզուների իմացության ավելացման միջոցով դասախոսական անձնակազմի մասնագիտական ունակությունների ու կարողությունների զարգացման և ակադեմիական մակարդակի բարձրացման պայմանների ապահովում,

3.5. Հարատև կրթության հիմնարար նպատակներին համահունչ՝ համալսարանում շարունակական ուսուցման և նոր հիմնարար գիտելիքների տրամադրման միջոցով կադրերի որակավորման բարձրացում և կատարելագործում,

3.6. Ժամանակակից կրթական տեխնոլոգիաների լայն կիրառական, կրթական ծրագրերի բովանդակային համակարգվածության և ճկուն հետադարձ կապի ապահովման ու վերահսկողության մեխանիզմների առկայության սկզբունքների և մեթոդների վրա հիմնված համալսարանի որակավորման բարձրացման համակարգի ձևավորում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ինտեգրումը ԵԲԿՏ-ին ենթադրում է բարձրագույն և շարունակական կրթական համակարգում Բոլոնիայի գործընթացի պահանջներին համապատասխան խորքային փոփոխությունների իրականացում, մասնավորապես ,,Ողջ կյանքի ընթացքում ուսումնառության'' հնարավորությունների ստեղծում՝ ապահովելով կրթության շարունակականությունը: Եվրոպական համագործակցության, Բոլոնիայի և Թուրինի գործընթացի կարևոր ուղղություններից է լրացուցիչ և շարունակական կրթությունը:

Շարունակական և լրացուցիչ կրթության խնդիրները ինչպես Եվրոպայում, այնպես էլ Հայաստանում գնալով դառնում են առաջնային: Շարունակական կրթության տեսանկյունից անհրաժեշտ է աջակցել արտադրության մեջ զբաղվածների մասնագիտական որակավորման անընդհատ բարձրացմանը՝ նրանց համար որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպման միջոցով աջակցել անհատներին կատարելագործելու իրենց հմտություններն ու կարողությունները:

Լրացուցիչ և շարունակական մասնագիտական ուսուցման համակարգը հնարավորություն է տալիս հիմնական մասնագիտությանը զուգահեռ՝ ուսումնառողներին համատեղ երկրորդ մասնագիտություն ձեռք բերելու, ինչպես նաև իրականացնել շրջանավարտների որակավորման բարձրացում, ինչը հնարավորություն կընձեռի ավելի հեշտ իրենց տեղը գտնել անընդհատ փոփոխվող ու զարգացող աշխատաշուկայում:

Այժմ հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերը տնօրինում են շուրջ 340 հազար գյուղացիական տնտեսություններ, որոնք մեծ մասամբ վարում են որևէ գյուղատնտեսական կրթություն չունեցող անձինք (ֆերմերներ): Արդյունքում՝ խախտվում են երկրագործության վարման ագրոտեխնիկական պահանջները, հողատարածքները ենթարկվում են էռոզիայի, հողերը աղքատանում են և նվազում է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը:

Ելնելով վերը հիշյալից՝ կարևորվում է ագրարային ոլորտի մասնագետների որակավորման բարձրացումը և գյուղատնտեսության վարման վերաբերյալ ֆերմերների վերապատրաստման իրականացումը:

Նպատակը	***Ագրարային արտադրության մասնագետների կրթական պահանջների բավարարում շարունակական ու լրացուցիչ կրթության պայմանների ապահովումն աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին ու մարտահրավերներին դիմակայելու կարողությունների զարգացում:***
Խնդիրները	

1. Համալսարանի լրացուցիչ և շարունակական կրթության համակարգի զարգացում:
2. Լրացուցիչ ու շարունակական կրթություն իրականցման նպատակով հանրապետության ագրարային ոլորտի խոշոր գործարանների հետ համագործակցության զարգացում
3. Լրացուցիչ ու շարունակական մասնագիտական կրթության պահանջների մոնիթորինգի անցկացում, պահանջարկ ունեցող դասընթացների ծրագրերի մշակում և դրանց ուսումնամեթոդական գրականության ապահովում,
4. Լրացուցիչ և շարունակական ուսուցման մշտադիտարկման իրականացում և համապատասխան տվյալների բազայի ստեղծում, վերլուծական աշխատանքների իրականացում և առկա իրավիճակի գնահատում:
5. Ագրարային ձեռնարկություններին, ֆերմերային տնտեսություններին, ձեռներեցներին և գյուղական բնակչությանը խորհրդատվական ու մեթոդական օժանդակություն ցուցաբերող օղակների գործունեության շրջանակների ընդլայնում և կատարելագործում,
6. Ագրարային ոլորտի մասնագետների և ֆերմերների որակավորման բարձրացման նպատակով ուսումնամեթոդական բազայի զարգացում,

7. Հեռավար ուսուցման տեխնոլոգիաների յուրացման ու կիրառման հաշվին՝ լրացուցիչ և շարունակական մասնագիտական կրթության ցանցի հետագա ընդլայնում:

ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄ

Համալսարանում ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների ավանդական տարանջատումը նվազեցնում է ինչպես ուսումնական գործընթացի, այնպես էլ գիտահետազոտական աշխատանքների որակը:

Համալսարանի զարգացման կարևորագույն խնդիրներից է հատկապես մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերում հետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացումը և դրանով իսկ կրթության որակի բարձրացմանը նպաստելը:

Նպատակը

Համալսարանում կրթական և գիտահետազոտական գործընթացների կապի ապահովում, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերում հետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացում:

Խնդիրները

1. Մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերում գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ներդրմանն ուղղված ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի վերանայում,
2. Հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացի հետ փոխկապակցելուն ուղղված քաղաքականության, ընթացակարգերի և մեթոդների մշակում և հաստատում,
3. Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության իրականացում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ագրարային համալսարանի գիտական գործունեության զարգացման ռազմավարությունը ներկա վիճակի, առկա խնդիրների, զարգացման հեռանկարների և ուղղությունների վերաբերյալ դրույթների ամբողջությունն է:

Հանրապետության ագրարային ոլորտում անկախության տարիներին տեղի ունեցած համակարգային փոփոխություններին զուգընթաց քայլեր են ձեռնարկվել ագրարային գիտական համակարգը բարեփոխելու և վերջինիս արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

Այսօր համալսարանն իր ընդգծված առաջատար դերն ունի հանրապետության ագրարային համակարգում՝ հանդիսանալով ագրարային ոլորտի մեծածավալ և բազմապրոֆիլ գիտակրթական ծրագրերի հիմնական իրականացնողն ու կրողը: 2012 թ.-ից համալսարանին մասնաճյուղի կարգավիճակով միավորվել են երեք գիտական կենտրոններ՝ ,,Հ.Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի'', ,,Խաղողա-պտղագինեգործության'' և ,,Ագրոկենսատեխնոլոգիայի'' գիտահետազոտական ինստիտուտները: 2013 թ-ի հունվարից կգործի նաև ,,Ագրարային տնտեսագիտություն և քաղաքականության հետազոտության կենտրոն''-ը:

Համալսարանում վերջին տարիներին որոշակիորեն պահպանվել են գիտական դպրոցներն ու համալսարանի գիտական ներուժը, գիտական ոլորտում ձեռք են բերվել որոշակի նվաճումներ և առկա են որոշակի դրական տեղաշարժեր:

2012 թ.-ին Համալսարանի պրոֆեսորադասախոսական և գիտաշխատողների կազմից 395-ն ունեն գիտական աստիճան, ընդ որում 62-ը գիտության դոկտորներ են, 336 –ը՝ թեկնածուներ:

ՀՀ պետական բյուջեից բազային ֆինանսավորմամբ 12 ծրագրերի շրջանակներում 2012 թ-ին ագրարային համալսարանի կազմում գործում են երեք գիտական կենտրոններ, երկու գիտահետազոտական ինստիտուտներ և վեց պրոբլեմային լաբորատորիաներ, որոնցում իրականացվում են նաև պետական

բյուջեից ֆինանսավորվող 7 դրամաշնորհային ծրագրեր: ՀՀ պետական բյուջեից տարբեր ծրագրերի 2012 թ. ֆինանսավորումը կազմել է շուրջ 270 միլիոն դրամ. դրանցում ընդգրկված են 33 գիտությունների դոկտորներ և 118 գիտությունների թեկնածուներ:

Համալսարանի կազմում գործում են նաև Ոսկեհատ և Բալահովիտ ուսումնափորձնական տնտեսությունները, Երասխահան և Նալբանդյան փորձակայանները, որոնք ունեն արտադրական բավարար հնարավորություններ, հետազոտական աշխատանքներ կատարելու և վերջիններիս արդյունքների ներդրման համար:

Համալսարանում միջազգային տարբեր գիտակրթական կառույցների հետ համատեղ կազմակերպվում է միջազգային գիտաժողովներ, նվիրված ագրարային ոլորտի որևէ հիմնախնդրին:

Դեռևս 2003 թ.-ից տպագրվում է ,,Հայաստանի Պետական Ագրարային Համալսարանի տեղեկագիր՝՝ գիտական միջազգային պարբերականը և Թբիլիսիում Վրաստանի, եվրոպական և ԱՊՀ անդամ երկրների ագրարային բուհերի և գիտական կառույցների հետ համատեղ ,,Ագրարային գիտության տեղեկագիր՝՝ միջազգային պարբերականները:

Համալսարանը համագործակցում է արտերկրի երեք տասնյակից ավելի գիտակրթական կառույցների հետ, որոնց հետ իրականացնում է տարբեր ծրագրեր:

Համալսարանի աշխատակիցները ամեն տարի միջազգային և հանրա-պետական տարբեր պարբերականներում և ամսագրերում տպագրում են 750-ից ավելի գիտական հոդվածներ, տարբեր գիտաժողովներում կարդում են 200-ից ավելի զեկուցումներ, ստանում են 20-25 հեղինակային իրավունքի վկայականներ, նրանց կողմից մշակվում է մեկ տասնյակից ավելի գյուղատնտեսության տարբեր բնագավառների համար տեխնոլոգիաներ և մեքենասարքավորումներ:

Այսուհանդերձ գիտության ոլորտի արտաքին և ներքին միջավայրերում առկա մի շարք մարտահրավերներ.

-ֆինանսական միջոցների տրամադրման ներկա ծավալների անբավարարությունը և դրանց օգտագործման ցածր արդյունավետությունը,

- նյութատեխնիկական բազայի անբավարարությունը և հնացած գիտական սարքավորումները հնարավորություն չեն տալիս իրականացնելու բարձր մակարդակի իրական բնույթի հետազոտություններ,

- հիմնարար ու կիրառական հետազոտությունների և գիտական արդյունքի ապրանքայնացման կապի ամրապնդման անհրաժեշտությունը,

- գիտական արդյունքի ապրանքայնացում կապը,

_ գրեթե խաթարված է գիտական դպրոցների սահուն սերնդափոխության գործընթացը, շարունակվում է գիտության ,,ծերացումը՝՝, նվազել է գիտության հեղինակությունը և գիտաշխատողի մասնագիտական գրավչությունը, ցածր է գիտահետազոտական պոտենցիալի աշխատանքի արդյունավետությունը,

_ թույլ է արձագանքը աշխատաշուկայի պահանջների նկատմամբ ագրարային ոլորտի վերամշակող կազմակերպությունների, ֆերմերային խոշոր տնտեսությունների և այլ տնտեսվարող սուբյեկտների կողմից, գիտության պատվերների համակարգը հստակ չի գործում:

Նպատակը

Հիմնարար հետազոտությունների ոլորտների ընդլայնմանը և կիրառական գիտական ուսումնասիրությունների ու փորձարարական-կոնստրուկտորական մշակումների ապահովմանը ուղղված՝ համալսարանի գիտահետզոտական-ինովացիոն գործունեության արդյունավետության բարձրացում, գիտահետազոտական գործունեության միջազգայնացում, գիտական հետազոտությունների արդյունքների ապրանքայնացում և գիտություն, կրթության ու արտադրության կապի ամրապնդում:

Խնդիրները

1. Գիտական համակարգի կարողությունների իրականացումը և գիտության ու առաջավոր տեխնոլոգիաների զարգացումն ապահովող ենթակառուցվածքների ձևավորում, ագրարային գիտության քաղաքականություն և տնտեսագիտական հետազոտությունների կենտրոնների, գիտական նոր պրոբլեմային լաբորատորիաների և գիտական կենտրոններում ու գիտահետազոտական ինստիտուտներում նոր բաժինների ստեղծում,
2. Երիտասարդ դասախոսներին ու գիտնականներին համալսարանում ամրացման և ստեղծագործական աճի ապահովման նպատակով՝ բազմակողմ օժանդակության ծրագրերի մշակում, պրոֆեսորադասախոսական կազմի ինտելեկտուալ պոտենցիալի իրացման համար բարենպաստ պայմանների ստեղծում,
3. Արտասահմանյան համալսարանների և գիտական կենտրոնների հետ գիտական համագործակցության զարգացում, մրցույթներում, գրանտներում և հատկապես միջազգային գիտատեխնիկական և այլ ծրագրերում մասնակցության ակտիվացման հաշվին՝ գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման ծավալների մեծացում՝
4. Գիտահետազոտական պոտենցիալի արդյունավետության բարձրացում, գիտահետազոտական և կրթական գործունության ինտեգրում, գիտահետազոտական արդյունքի ապրանքայնացման ապահովում, ուսումնագիտական լաբորատորիաների արտաբյուջետային գործունեության ակտիվացում,
5. Համալսարանի ինովացիոն ենթակառուցվածքի զարգացում, գիտամանկավարժական պոտենցիալի և հանրապետության խոշոր ձեռնարկությունների, ֆիրմաների, գիտահետազոտական ինստիտուտների հնարավորությունները միավորող ուսումնաարտադրական, գիտաինովացիոն կառույցների ստեղծում,

6. Գիտության և արտադրության կապի ամրապնդում, գյուղատնտեսական արտադրությունում հետազոտական արդյունքների ներդրման մեխանիզմների մշակում, գյուղատնտեսական արտադրության կարիքների բացահայտման և հետազոտական աշխատանքները դրանց լուծմանը ուղղված մեխանիզմների մշակում, հանրապետության այլ գիտական հիմնարկությունների հետ կապերի ամրապնդում,

7. Գիտական ենթակառույցվածքների նյութատեխնիկական բազայի զարգացում, եզակի հետազոտական սարքավորումներով հագեցած տարբեր նոր հետազոտական լաբորատորիաների ստեղծում, մասնագետների համատեղ օգտագործման համար գիտության ոլորտի նյութատեխնիկական բազայի արդիականացման մեխանիզմների մշակում:

8. Գիտության ոլորտի բնականոն սերնդափոխության ապահովում, բարձր որակավորում ունեցող երիտասարդ գիտական կադրերի հետազոտական գործունեությունը խրախուսելու քաղաքականություն և ընթացակարգի մշակում, հետբուհական կրթության ծրագրերի արդիականացում,

9. Գիտահետազոտական և կրթական գործունեության ինտեգրում, հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման քաղաքականության իրականացում:

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հանրապետության պարենային անվտանգության մարտավարության հիմնական բաղադրիչներից է խորհրդատվական համակարգի կայուն զարգացումը, որի ապահովմանն է միտված համալսարանի խորհրդատվական համակարգի կայուն զարգացման ռազմավարական ծրագրի բովանդակությունը:

Հայաստանի պետական ագրարային համալսարանը համարվում է ագրարային խորհրդատվական և տեղեկատվական համակարգի առաջատարը, ապահովված է համապատասխան նյութատեխնիկական բազայով, խորհրդատվական գործի կազմակերպման և իրականացման միջազգային փորձ ունեցող կադրերով, ովքեր ագրարային ոլորտի տարբեր ճյուղերի մասնագետներին, ֆերմերներին, ձեռնարկություններին, վերամշակող կազմակերպություններին տրամադրում են խորհրդատվություն և տեղեկատվություն ագրարային գիտության նորագույն նվաճումների, ինովացիոն տեխնոլոգիաների և ավանդական արդյունավետ տեխնոլոգիաների մասին:

1998թ-ին գյուղատնտեսության նախարարության ռազմավարությունից ելնելով, հանրապետությունում խորհրդատվական ցանցի ընդլայնման, կատարվող խորհրդատվական աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով յուրաքանչյուր մարզում Ագրոգիտասփյուռ ձեռնարկության միջոցով ստեղծվեցին գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններ (ԳԱՄԿ) և նախարարության ենթակայության տակ գտնվող հանրապետական կենտրոնը (ԳԱՀԿ), իսկ Ագրոգիտասփյուռ ձեռնարկությունը ինտեգրվեց Հայաստանի պետական ագրարային համալսարանին՝ որպես Ագրոգիտասփյուռ դեպարտամենտ: Համալսարանի խորհրդատվական գործունեությունը շարունակվեց՝ համագործակցելով մարզերում ստեղծված Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ)-երի և գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի հետ բուսաբուծության, բանջարաբուծության, բույսերի պաշտպանություն, խաղողագործություն, պտղաբուծություն, գինեգործություն, անասնաբուծության, անասնաբուժության, գյուղատնտեսական մթերքների վերամշակման տեխոլոգիայի, ոռոգման

գիտագործական կառավարման, գյուղական համայնքների զարգացման, պատանեկան ակումբների կազմակերպման, մասնագիտական կողմնորոշման և տնայնագործության ոլորտներում:

Նպատակը

Հանրապետության ագրարային քաղաքականության հիմնական դրույթների իրականացման և շուկայական տնտեսության պայմաններում գյուղատնտեսության կայուն զարգացմանը, պարենային ապահովման պահանջների բավարարմանը և բնապահպանական հիմնահարցերի լուծմանը նպաստող համալսարանի խորհրդատվական համակարգի ստեղծում և զարգացում:

Խնդիրները

1. Ագրարային խորհրդատվության և տեղեկատվության համալսարանական համակարգի կառուցվածքի կատարելագործման և նյութատեխնիկական բազայի վերազինման հիմքի վրա ագրարային խորհրդատվության ու տեղեկատվության համալսարանական համակարգի կայուն զարգացման նախադրյալների մշակում և զարգացում,

2. Հանրապետության խորհրդատվական համակարգի կայացման և զարգացման գործում Համալսարանի խորհրդատվական համակարգի հիմնադիր և լոկոմոտիվ կառույցի կարգավիճակի վերականգնում, համալսարանի խորհրդատվական համակարգի կատարելագործում,

3. Այլընտրանքային կրթության և խորհրդատվության շարունակական գործընթացների հիման վրա ագրարային գիտակրթական, խորհրդատվական և տեղեկատվական համակարգի կայուն զարգացում, գյուղատնտեսության կոոպերացման և խորհրդատվության մասին օրենքների ընդունում, ոլորտի հիմնախնդիրների լուծմանը պրոֆեսորադասախոսական անձնակազմի և արհեստավարժ մասնագետների ներգրավման ապահովում,

4. Խորհրդատվական և տեղեկատվական համակարգի կայուն, հետադարձ կապի մեխանիզմների մշակում զարգացում, գյուղացիական, ֆերմերային, վերամշակող տնտեսությունների ու ձեռնարկությունների հետ հաղորդակցման և փորձի փոխանակման ու տարածման գործառույթների արմատավորում,

5. Խորհրդատվական և տեղեկատվական համակարգի մասնագիտական որակավորման բնութագրերի ու չափորոշիչների վերանայում ու կատարելագործում,

6. Գյուղացիական, ֆերմերային տնտեսությունների, վերամշակող ձեռնարկությունների հետ հեռավար խորհրդատվության ու տեղեկատվության մատուցման կայուն համակարգի ստեղծում, գյուղացիական, ֆերմերային, վերամշակող տնտեսությունների և ձեռնարկությունների կարիքների բացահայտման մեթոդների կատարելագործում ու բարելավում,

7. Խորհրդատվական և տեղեկատվական ոլորտի օրենսդրական և նորմատիվային դրույթների ուսումնասիրություն ու դրանց կատարելագործման առաջարկությունների մշակում, օպերատիվ խորհրդատվական համակարգի մշակում և ներդրում, խորհրդատվական և տեղեկատվական նյութերի հրատարակման և տարածման համակարգի կատարելագործում,

8. Համալսարանի պրոֆեսորադասխոսական անձնակազմի ուսումնագիտական գործառույթների համատեքստում՝ խորհրդատվության բաղադրիչի հստակեցում, դրա իրականացման պայմանների ապահովում, ֆերմերային տնտեսություն-ներում ագրարային գիտության նորագույն տեխնոլոգիաների ներդրման պարագայում, խորհրդատվական, տեղեկատվական և ‘,,Ագրոգիտասփյուռ’’ համակարգի ինքնաֆինանսավորման իրավական, տնտեսական, մեթոդաբանա-կան և կազմակերպական խնդիրների լուծում,

9. Արտասահմանյան համալսարանների և միջազգային կազմակերպությունների հետ իրականացվող համատեղ ծրագրերի և համագործակցության ընդլայնում, գյուղատնտեսական հումքի վերամշակման ու պահպանման նոր տեխնոլոգիա-ների ուսուցման, ուսումնաարտադրական հոսքագծերի, ցուցադրական լաբորա-

տորիաների, թանգարանների արդիականացման կրթության և խորհրդատ-վության համապարփակ համակարգի ստեղծում,

10. Համալսարանի ուսումնափորձնական տնտեսությունների բազայի վրա խորհրդատվության գործնական հմտությունների ուսուցման, ստացված տեսական գիտելիքների կիրառման և արտադրության մեջ նորագույն տեխնոլոգիաների ներդրման գիտագործնական համակարգի զարգացում, խորհրդատվության իրականացման արդյունքների, տնտեսական, էկոլոգիական և սոցիալական արդյունավետության գնահատման չափանիշների ու մեխանիզմների մշակում:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Համալսարանի կրթական, հետազոտական ու խորհրդատվական գործունեության գլխավոր նպատակների իրականացումը պահանջում է ինվեստիցիաների ներդրման միջոցով՝ էականորեն բարձրացնել կրթական կառավարման համակարգի արդյունավետությունը և զարգացնել կառավարման օղակների ներուժը: Կառավարման համակարգի բարեփոխումների անհրաժեշտությունը պայմանավորված է նաև ազգարային համալսարանի կազմակերպչաիրավական կարգավիճակի փոփոխությամբ:

Կարևոր խնդիր է նաև համալսարանի կառույցների և ստորաբաժանումների թվաքանակի օպտիմալացումը և դրանց գործունեության ոլորտների, լիազորությունների ու պարտականությունների հստակեցումը: Այս առումով անհրաժեշտ է մշակել գնահատման ցուցանիշներ և պարբերաբար գնահատել համալսարանի առանձին ստորաբաժանումների ու կառույցների գործունեության արդյունավետությունը և ընդունել համապատասխան որոշումներ:

Համալսարանի յուրաքանչյուր կառույց պետք է ունենա իր զարգացման ռազմավարական հայեցակարգը, որը նախադրյալներ կստեղծի արդյունավետ գործունեության և աշխատակիցների մոտիվացիան ապահովելու համար:

Համալսարանի կառավարման համակարգի ներկա փուլի խնդիրները պայմանավորված են հետևյալ մարտահրավերներով.

- կառավարման մարմինների գործունեության քաղաքականության, ընթացակարգերի և աշխատակարգերի ամբողջականության անկատարությունը,
- կառավարման համակարգի մեխանիզմների ոչ լիարժեք համապատասխանությունը հանրային նոր կառավարման սկզբունքներին,
- կառավարման էթիկայի նորմերի պահպանման անհրաժեշտությունը,
- կառավարման օղակների և կառույցների մասնագիտական ներուժի պակասը:

Նպատակը

Համալսարանի առաքելության և նպատակների իրականացմանը նպատակառուղղված Հանրային Նոր Կառավարման սկզբունքներին համապատասխան՝ համալսարանի կառավարման համակարգի զարգացում և կառավարման մեխանիզմների կատարելագործում:

Խնդիրները

1. Համալսարանի գործունեության բնագավառներում կառավարման ժամանակակից մենեջմենթի մեթոդների ներդրում, ուսումնամեթոդական, գիտա-ինովացիոն, ֆինանսական և կադրային բնագավառներում մենեջմենթի համակարգերի ձևավորում, վարչակառավարչական կազմի վերապատրաստումների իրականացում,
2. Կոլեգիալ կառավարման սկզբունքների ընդլայնում և կառավարման ապակենտրոնացման քաղաքականության զարգացում, համալսարանի և առանձին ստորաբաժանումների կառավարման գործընթացներում կառավարման մասնակցային մեխանիզմների ընդլայնում և կոլեգիալության բարձրացում
3. Ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտահետազոտական գործունեության ոլորտում ներհամալսարանական ինտեգրացման և միջֆակուլտետային համագործակցության ուժեղացում, ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով ժամանակակից մենեջմենթի մեթոդների կիրառում, կադրային քաղաքականության, կրթական գիտա-ինովացիոն և ֆինանսատնտեսական գործունեության ոլորտներում ֆակուլտետների ինքնուրույնության ավելացում և պատասխանատվության բարձրացում,
4. Համալսարանի նոր Կանոնադրությանը համապատասխան ներհամալսարանական փաստաթղթային փաթեթների ստեղծում և փաստաթղթային բազայի կատարելագործում, համալսարանի կանոնադրության և համալսարանի կրթական, գիտահետազոտական, ֆինանսական և այլ գործունեությունների իրավական հիմքեր հանդիսացող տեղական ակտերի իրականացման նկատմամբ հսկողության ուժեղացում,

5. Համալսարանի ուսումնական, գիտական և կառավարչական գործունեության կառավարման համակարգի տեղեկատվության համակարգչային և կոմունիկացիոն ապահովում, համալսարանի կառավարման տեղեկատվական համակարգի և տեղեկատվական պաշարների զարգացում, ընդլայնում և ամբողջականացում, ճիշտ որոշումների կայացման համար՝ հուսալի բովանդակ և ամբողջական տվյալների բազայի և տեղեկատվության հավաքագրման մեխանիզմների ստեղծում,
6. Համալսարանի կառավարման գործընթացներում ուսանողների դերի բարձրացում և մասնակցության ավելացում:

ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ուսումնական, գիտական և խորհրդատվական գործունեությունը հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ է ապահովել համալսարանի նյութատեխնիկական բազայի շարունակական զարգացումը: Դասավանդման և ուսումնառության որակի բարձրացման համար կարևոր է ուսուցման ժամանակակից տեխնիկական միջոցներով լսարանային ֆոնդի հետագա համալրումն ու կահավորումը:

Ագրարային կրթության գործնական հմտությունների ապահովման, ձեռք բերած տեսական գիտելիքների կիրառման և արտադրության մեջ նորագույն տեխնոլոգիաների ներդրման նպատակով անհրաժեշտ է իրականացնել գիտակրթական լաբորատոր բազայի նորացում և արդիականացում՝ այդ նպատակին ծառայեցնելով նաև հանրապետության ագրոպարենային համակարգը սպասարկող ձեռնարկությունների ու կազմկերպությունների, ինչպես նաև համալսարանի Ոսկեհատի և Բալահովիտի ուսումնափորձնական տնտեսությունների հնարավորությունները:

Համալսարանի նյութատեխնիկական բազայի զարգացման ռազմավարությունը իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել շենքերի ու շինությունների ֆոնդի ,,ծերացումը'', տեղեկատվական ենթակառուցվածքների անբավարարությունը, շահագործական մեծ ծախսերը, անբավարար ֆինանսավորումը, գույքային համալիրի կառավարման ցածր արդյունավետությունը և սարքավորումների ու կահույքի նկատմամբ ուսանողների և անձնակազմի երբեմն անբարեխիղճ վերաբերմունքը:

Ուսումնական ռեսուրսները և մյուս օժանդակ սարքավորումները պետք է հեշտությամբ հասանելի լինեն ուսանողներին, դրանք պետք է համալրվեն՝ հաշվի առնելով ուսանողների կարիքները և հետադարձ կապով արձագանքեն ծառայություններից օգտվողների ակնկալիքներին: Համալսարանը պետք է մշտապես հսկի, գնահատի և բարելավի ուսանողներին մատուցվող օժանդակ ծառայությունների արդյունավետությունը:

Ուսումնական ռեսուրսների և օժանդակ ծառայությունների զարգացման ռազմավարությունը հանդիսանում է Որակի ապահովման և բարելավման համալսարանի ընդհանուր քաղաքականության բաղկացուցիչ մասը:

Նպատակը

Համալսարանի գիտամանկավարժական անձնակազմի և ուսումնառողների արդյունավետ և բեղմնավոր գործունեության համար պատշաճ պայմանների ստեղծում, կրթական ծրագրերի պահանջներին համարժեք և ուսումնառողներին մատչելի ուսումնական ռեսուրսների ու դրանց արդյունավետ օգտագործման ապահովում:

Խնդիրները

1. Մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակներին և ելքային պահանջներին համապատասխանող լսարանային ու լաբորատոր բազայի և տեխնիկական ծառայությունների զարգացում:
2. Լաբորատոր նյութատեխնիկական և ուսումնափորձնական բազայի, շենքերի գույքի և կահավորման նորացում, նորոգում և բարելավում:
3. Ուսումնառության տեղեկատվական, տեխնիկական և այլ ռեսուրսների ու ծառայությունների մատչելիության ու լիարժեք օգտագործման ապահովում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի բարեփոխումը ԵԲԿՏ-ի նոր տասնամյակի գործողությունների ծրագրի հիմնական ուղղություններից մեկն է: Ֆինանսատնտեսական բարեփոխումները հանդիսանում են համալսարանի կրթական, գիտական և խորհրդատվական գործունեության կայուն զարգացման հիմնական գրավականը: Համալսարանի ֆինանսատնտեսական գործունեության կայունության երաշխիքը համալսարանի իրաբանական նոր կարգավիճակով պայմանավորված՝ հանրապետության միջգերատեսչական և միջազգային համագործակցության կապերի ամրապնդման ու ընդլայնման ճանապարհով՝ լրացուցիչ ֆինանսական աղբյուրների բացահայտումն է և դրանց ներհոսքի կայունացումը:

Ֆինանսական զարգացման ուղիներից են նաև հանրապետությունում և նրա սահմաններից դուրս ագրարայի ոլորտի կրթական, գիտական, խորհրդատվական, արտադրական և այլ ծառայությունների դիմաց ֆինանսական մուտքերի ապահովմանն ուղղված մեխանիզմների մշակումը ու իրագործումը:

Ֆինանսատնտեսական գործունեության կայուն զարգացման ապահովման նախապայմաններից է նաև փոփոխվող պահանջներին համապատասխան՝ համալսարանի հիմնական ֆոնդերի և նյութատեխնիկական բազայի զարգացումը: Հատկապես կարևորվում է համալսարանի աշխատակիցների և ուսումնառողների պատասխանատվության ու շահագրգռվածության բարձրացումը՝ տարածքների, սարքավորումների և գույքի արդյունավետ օգտագործման ու պահպանման առումով:

Բարձրագույն կրթության ֆինանսավորման մեխանիզմը հիմնականում հիմնված է մուտքերի, այլ ոչ թե ուսման արդյունքների վրա, ֆինանսավորման հիմքում ընկած է համալսարանի ուսանողների թիվը, այլ ոչ թե համապատասխան գիտելիքների պաշար և հմտություններ ունեցող շրջանավարտների թիվը: Աշխատաշուկայում մասնագետների պահանջարկը, տնտեսության զարգացման առաջնային ուղղությունները քիչ դեր են խաղում բարձրագույն կրթության ֆինանսավորման գործող համակարգում, ըստ էության չեն գործում կամ խիստ սահմանափակ են

ուսանողական վարկերի, դրամաշնորհների և ուսանողներին հատկացվող ֆինանսական աջակցության այլ ձևերն ու մեխանիզմները:

Բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի բարեփոխումների հիմնական մարտահրավերներից են.

- համալսարանի ֆինանսավորման աղբյուրների և մեխանիզմների դիվերսիֆիկացման անհրաժեշտությունը,
- ուսանողների ֆինանսական աջակցության ծավալների ու ձևերի ընդլայնման անհրաժեշտությունը,
- բարձրագույն կրթության պետական ֆինանսավորման ծավալների ավելացման անհրաժեշտությունը,
- բարձրագույն կրթության և գործարար միջավայրի համագործակցության խթանման և բարձրագույն կրթության մեջ մասնավոր ներդրումների խրախուսման անհրաժեշտությունը:

Նպատակը

Համալսարանի ֆինանսավորման համակարգի բարեփոխում, կրթական, գիտական, խորհրդատվական, տնտեսական ու սոցիալական ոլորտներում կայուն ֆինանսական վիճակի հաստատում:

Խնդիրները

1. Համալսարանի ֆինանսական պլանավորման համակարգի մշակում, ֆինանսական գործունեության քաղաքականության և ընթացակարգերի մշակում ու հաստատում, համալսարանի տնօրինման ենթակա սեփականության արդյունավետ կառավարման համակարգի մշակում ու ներդրում,
2. Համալսարանի անշարժ և շարժական գույքի, նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսների տվյալների բազայի ստեղծում և դրանց շահագործման մոնիթորինգի ու վերահսկողության համակարգի ներդրում,

3. Համալսարանի գործունեության ֆինանսատնտեսական վիճակի և հնարավոր ռիսկերի վերլուծություն, շուկայական և տնտեսական տարաբնույթ ռիսկերի նկատմամբ համալսարանի ֆինանսական ռեուրսների ապահովվածության մակարդակի բարձրացման նպատակով՝ ռիսկերի կառավարման համակարգի ներդրում,
4. Համալսարնի գործունեության տարբեր ուղղություններով ֆինանսավորման աղբյուրների և արտաբյուջետային միջոցների ծավալների ընդլայնում, կրթական ոլորտի օպտիմալացման, գիտական մշակումների ներդրման, խորհրդատվական, տեղեկատվական և ուսուցողական վճարովի դասընթացների միջոցով՝ համալսարանի ֆինանսական մուտքերի ապահովման համակարգի ձևավորում,
5. Համալսարանի ուսումնափորձնական տնտեսությունների բազայի վրա գիտաարտադրական լաբորատորիաների և ինովացիոն տեխնոլոգիաներով գյուղատնտեսական հումքի վերամշակման գործունեությամբ ֆինանսական մուտքերի ապահովում, համալսարանի մասնաճյուղերի արտաբյուջետային գործունեության ընդլայնում,
6. Արտաբյուջետային միջոցների ձևավորման և ծախսումների գործընթացներում ֆակուլտետների ակտիվության և պատասխանատվության բարձրացում,
7. Համալսարանի ներքին աուդիտի ծառայության դերի բարձրացում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Համալսարանի ռազմավարական նպատակների լուծումները պայմանավորված են նաև աշխատակիցների և ուսումնառողների սոցիալական ապահովածության մակարդակով:

Սոցիալական ոլորտի զրգացման ռազմավարության նպատակն ու խնդիրները պայմանավորված են այս ոլորտում առկա մի շարք մարտահրավերներով.

- համալսարանի աշխատակիցների և ուսումնառողների ոչ բավարար սոցիալական վիճակը,
- պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի դեռևս ցածր աշխատավարձը,
- համալսարանի աշխատկիցների և ուսումնառողների առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների ենթակառուցվածքների անկատարությունը,
- համալսարանի գործունեության տարբեր ոլորտներում կոռուպցիոն ռիսկերի առկայությունը,
- համալսարանում ուսումնառողների հոգեբանական սատարման ծառայության բացակայությունը և հոգեբանական ու խորհրդատվական օգնության կազմակերպման անհրաժեշտությունը,
- համալսարանի ուսումնառողներին ու դասախոսներին մատչելի սպասարկման և այլ ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը:

Նպատակը

Համալսարանի աշխատակիցների և ուսումնառողների սոցիալական կարիքների բավարարման, գիտա-մանկավարժական կոլեկտիվի արդյունավետ աշխատանքի և համալսարանական հանրության համալիր սոցիալական օժանդակության ու պաշտպանության համար բարենպաստ պայմանների ստեղծում:

Խնդիրները

1. Համալսարանի աշխատակիցների սոցիալական վիճակի բարելավում և աշխատանքի վարձատրության համակարգի կատարելագործում, աշխատանքի արդյունավետության և մասնագիտական կատարելագործման խթանման նպատակով՝ դասախոսական կազմի աշխատանքի վարձատրության տարբերակման մեխանիզմների կիրառում, համալսարանի առաջավոր աշխատակիցների ու ուսումնառողների նկատմամբ ֆինանսական խրախուսման քաղաքականության իրականացում,
2. Սոցիալական վիճակի համալիր գնահատման ցուցանիշների լիակազմով համալսարանի աշխատակիցների սոցիալական մոնիթորինգի համակարգի ստեղծում, համալսարանի սոցիալական ծրագրերի ընդլայնում, սոցիալական ենթակառուցվածքների զարգացում, սոցիալական ծրագրերին և միջոցառումներին հատկացվող ֆինանսական միջոցառումների ավելացում,
3. Համալսարանի աշխատակիցների և ուսումնառողների (հաշվի առնելով նաև առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողներին) առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների ենթակառուցվածքների կատարելագործում,
4. Համալսարանի հակակոռուպցիոն հանձնաժողովի ձևավորում, հակակոռուպցիոն գործունեության քաղաքականության և ընթացակարգերի մշակում ու հաստատում, դիմորդների ընդունելության, ուսանողների գիտելիքների գնահատման, պետական որակավորման քննությունների, դիպլոմային աշխատանքների պաշտպանության գործընթացներում և համալսարանի գործունեության տարբեր ոլորտներում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման մեխանիզմների մշակում ու ներդրում,
5. Համալսարանում ուսումնառողներին հոգեբանական սատարման ծառայության ստեղծում և հոգեբանական ու խորհրդատվական օգնության կազմակերպում ու իրականացում:

6. Համալսարանի ուսումնառողներին և դասախոսներին մատչելի սպասարկման ծառայությունների և սննդի ու բուժսպասարկման ապահովում:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Որակի ապահովման գործընթացների իրականացման համար շատ կարևոր է դրանց տեղեկատավական պատշաճ ապահովումը, ինչը պահանջում է վերակազմակերպել համալսարանական գործող տեղեկատվական համակարգը՝ Որակի ապահովման բուհական համակարգի տեղեկատվական պահանջներին և ENQA ստանդարտներին համապատասխան:

Որակի ապահովման արդյունավետության բարձրացման և ինստիտուցիոնալ ինքնաիրազեկվածությունն ապահովելու համար, համալսարանը պետք է ունենա իր գործունեության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման ու վերլուծության միջոցներ:

Տեղեկատվական համակարգերը և ռեսուրսները պետք է կազմակերպել այնպես, որ ընդգրկեն համալսարանի գործունեության հիմնական ոլորտները; Վերակազմակերպվող տեղեկատվական համակարգի գործունեության տիրույթը պետք է ընդգրկի ուսանողների առաջընթացը և ուսումնական առաջադիմությունը, շրջանավարտների ծառայունակությունը, ծրագրերից ուսանողների բավարարվածությունը, դասախոսական կազմի արդյունավետությունը, ուսումնառության ռեսուրսները և համալսարանի գործունեության առանցքային ցուցանիշները:

Տեղեկատվական համակարգերը անհրաժեշտ տեղեկատվություն պետք է ապահովեն նաև որակի ապահովման, ինքնավերլուծության, ինքնագնահատման և համալսարանի գործունեության այլ ոլորտների արդյունավետության վերլուծության համար, որոնց արդյունքները հիմք են հանդիսանում համալսարանի ռազմավարական պլանավորման համար: Համալսարանը պետք է ապահովի բուհական համակարգի և կառավարման տեղեկատվական համակարգի ներդաշնակ գործունեությունը և համաքայլ զարգացումը՝ իր ռազմավարական պլանի նպատակներին համահունչ:

Նպատակը	***Որակի ապահովման բուհական համակարգի (ՈԱԲՀ) տեղեկատվական կարիքներին և համալսարանից հոլող արտաքին (հանրային) տեղեկատվության պահանջներին համապատասխան՝ համալսարանի տեղեկատվական համակարգի վերակազմակեր-պում:***
Խնդիրները	

1. Կրթական ծրագրերի և գործունեության այլ ոլորտների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ ստույգ տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և օգտագործում,
2. Համալսարանում ընթացող որակի գնահատման և ապահովման բոլոր գործընթացների լիարժեք իրականացման համար անհրաժեշտ տվյալների հավաքում, ներմուծում և մշակում,
3. Որակին առնչվող տեղեկատվության փաստաթղթային, էլեկտրոնային, գրաֆիկական ձևերի գրանցման ու պահպանման համար տվյալների միասնական բազայի ձևավորում, որակի վերաբերյալ տեղեկատվության վերլուծության, որակի վրա ազդող գործոնների բացահայտման, դրանց դասակարգման և որակի բարելավման ուղիների հայտնաբերման գործիքամիջոցների մշակում և ներդրում,
4. Համալսարանի կառավարման տարբեր մակարդակներում ձևավորվող և փոխանցվող, որակին առնչվող տարաբնույթ տեղեկատվական հոսքերի համակարգում և փոխկապակցում,
5. Առաջարկվող կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ արդիական, անշահախնդիր և օբյեկտիվ քանակական ու որակական տեղեկատվության կանոնավոր հրապարակում, հրապարակման ենթակա տեղեկատվության հիմնական տարատեսակներն ամփոփոխ միասնական ձևաթերթերի ստեղծում,

6. Բոլոր շահակիցներին համալսարանի ընդհանուր իրավիճակի և բոլոր մասնագիտությունների կրթական ծրագրերի վերաբերյալ ստույգ, հուսալի ու անաչառ, պարբերաբար թարմացվող տեղեկատվության տրամադրում, հանրապետական ու տեղական ԶԼՄ-ներով համալսարանի գործունեության լուսաբանում, համալսարանի տարբեր միջոցառումների վերաբերյալ հաղորդագրությունների տարածում,
7. Համալսարանի վեբ-կայքի պարբերական թարմացում, միջբուհական վեբ-կայքի և ինտերնետային պորտալի ստեղծում, համալսարանի դիմորդների համար տեղեկագրքերի և բուկլետների պարբերաբար հրատարակում, համալսարանի առօրյայի և գործունեության լուսաբանման նպատակով՝ տպագիր և էլեկտրոնային նյութերի հրապարակում,
8. Հանրակրթական դպրոցների շրջանավարտների հետ մասնագիտական կողմնորոշման նպատակով՝ համալսարանի մասնագիտական կառույցների ներկայացուցիչների հանդիպումների կազմակերպում,
9. Համալսարանի գործունեության վերաբերյալ տարեկան ընդհանուր հաշվետվության ներկայացում, տարեկան պարբերականությամբ համալսարանի արտաքին տեղեկատվության մոնիթորինգի պլանավորում և իրականացում:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ

Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման կարևորագույն ուղղություններից է համալսարնի գործունեության միջազգայնացումը և ուսանողների, դասախոսների և շրջանավարտների անարգել շարժունության խթանումը: Եվրոպական կրթական տարածքում առկա են ուսման արդյունքների փոխճանաչման հուսալի մեխանիզմներ՝ Եվրոպական կրեդիտների փոխանցման համակարգը (ECTS) և ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ (ENIK/NARIC) ցանցը, որոնք լայնորեն օգտագործվում են միջազգային ու եվրոպական տարածքում ուսանողների շարժունության խթանման ու ընդլայնման նպատակով: Ակադեմիական շարժունության համարժեք պայմաններ են ստեղծված դասախոսների և գիտաշխատողների համար, մեծածավալ աշխատանքներ են կատարվում որակավորումների փոխճանաչման ուղղությամբ:

Ակադեմիական կրեդիտների կուտակման ու փոխանցման, որակի գնահատման և ապահովման համակարգերի, ճանաչման թափանցիկ ընթացակարգերի ու դիպլոմի համաեվրոպական միասնական հավելվածի ներդրումը, նույնպես խթանում են ուսանողների ու դասախոսների շարժունությունը:

Համալսարանը ակտիվորեն մասնակցում է Բոլոնիայի հռչակագրով ամրագրված տարբեր գործընթացներին, մասնավորապես՝ շարժունության տարբեր ձևերի ներդրման, եվրոպական կրթական չափանիշներին համապատասխան կրթական չափորոշիչների մշակման ու ներդրման, ուսանողների, գիտաշխատողների և բուհական անձնակազմի շարժունության ակտիվացման և առաջավոր փորձի տարածման հարցերում: Շարժունության գործընթացներին շատ են նպաստում Եվրոմիության Տեմպուս, Էրասմաս-Մունդուս և այլ ծրագրերին համալսարանի ակտիվ մասնակցությունը:

Ներկայումս համալսարանը 60-ից ավել համագործակցության պայմանագրեր ու հուշագրեր ունի եվրոպական, ամերիկյան, ԱՊՀ և այլ երկրների ագրարային համալսարանների ու կրթագիտական այլ կազմակերպությունների հետ: Համա-

գործակցության այդ ծրագրերում հեռանկարային ուղղություններ են համարվում միջբուհական փոխանակումը և շարժունության խրախուսումը, կրթական ու հետազոտական համագործակցությունը և համատեղ ծրագրերի իրականացումը:

Այնուհանդերձ համալսարանի ուսումնառողների, դասախոսների ու գիտաշխատողների շարժունությունը թե ներքին, թե արտաքին ոլորտներում խիստ սահմանափակ է, միջազգային մեծ թվով շարժունության ծրագրերին համալսարանը մասնակցում է իր ներուժի փոքր չափով, որը պայմանավորված է այս ոլորտում առկա մի շարք հիմնախնդիրներով.

- ամբիոնների ու դասախոսների իներտությունը, ուսումնառողների ու դասախոսների օտար լեզվի թույլ իմացությունը և նախաձեռնության պակասը,
- ֆինանսական միջոցների անբավարարությունը,
- մասնագիտությունների <<կոշտ>> ուսումնական պլանները,
- եվրոպական չափայնությամբ և մասնակցությամբ համատեղ ծրագրերի պակասը,
- ակադեմիական կրեդիտների փոխանցման և փոխճանաչման մեխանիզմների ու դրանց իրավական հիմքերի անկատարությունը,
- արտաքին շարժունություն ապահովող միջպետական համաձայնագրերի ու ծրագրերի անբավարար մակարդակը:

Նպատակը

Համալսարանի արտաքին կապերի զարգացում, միջազգայնացման ընդլայնում, Լիսաբոնի ճանաչման սկզբունքներին համապատասխան՝ ուսումնառողների, դասախոսների ու գիտաշխատողների շարժունության ակտիվացում և դրանց նպաստող պայմանների ապահովում:

Խնդիրները

1. Շարժունության եվրոպական ծրագրերին համալսարանի ընդգրկման ընդլայնում, արտասահմանյան համալսարանների հետ միջազգային համագործակցության ծրագրերի ընդլայնում և զարգացում,
2. Համալսարանի կրթական ծրագրերում շարժունության տարբեր ձևերի ներդրում, որոշակի ժամանակահատվածով <<շարժունության պատուհանի>> հնարավորության նախատեսում,
3. Բակալավրային և մագիստրոսական ուսուցման շարժունությունն ու միջազգայնացմանը նպաստող նմանատիպ այլ ճանաչված կրթական ծրագրերին համահունչ՝ մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայում և հաստատում,
4. Բոլոր մասնագիտությունների համար բուհական ավարտական փաստաթղթի՝ դիպլոմի համաեվրոպական միասնական հավելվածի մշակում ու հաստատում,
5. Շարժունության համալսարանական ցուցանիշի բարձրացում, ուսանողների ու դասախոսների շարժունության հնարավորությունների բացահայտման մեխանիզմների մշակում ու ներդրում:
6. Ագրարային ոլորտի միջազգային, տարածաշրջանային և հանրապետական հաստատությունների հետ համատեղ ագրարային ոլորտի կրթական ու հետազոտական ծրագրերի իրականացման ընդլայնում և շարժունության ծրագրերի վերաբերյալ համալսարանական հանրության իրազեկվածության աստիճանի բարձրացում:

Թղթի չափսը 60x84 1/8, 9,0 տպ.մամուլ

Պատվեր 239: Տպաքանակ 120:

ՀԱԱՀ-ի տպարան, Տերյան 74